




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ԴՈԱԿ



ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԵՐԵՎԱՆ  
2020

№4  
ISSN 2579-2865



**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԻ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

Հիմնադրված է 2019 թվականին

*Խմբագրական խորհուրդ*

*Գլխավոր խմբագիր*  
**Ա.Ն. Հովսեփյան**

*Պատասխանատու քարտուղար*  
**Ա.Թ. Մոսիկյան**

*Խմբագրական խորհրդի անդամներ*

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| Ա.Վ. Աղասյան           | Ռ.Վ. Աղուզումցյան        |
| Ս.Վ. Առաքելյան         | Ա.Պ. Գահնապետյան         |
| Վ.Գ. Ենգիբարյան        | Ա.Ի. Ուսով (Ռուսաստան)   |
| Ա.Ն. Կլյուն (Ուկրաինա) | Ռ.Ա. Հովհաննեսյան        |
| Ա.Պ. Ղուկասյան         | Ս.Ա. Մինասյան            |
| Պ.Ս. Ոսկանյան          | Ա.Ս. Չախոյան             |
| Ա.Վ. Պապոյան           | Ա.Գ. Ռուվին (Ուկրաինա)   |
| Վ.Գ. Սահակյան          | Դ.Ն. Վիեռա (Պորտուգալիա) |

*Խմբագրական կոլեգիա*

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| Պ.Ս. Ոսկանյան     | Ա.Պ. Գահնապետյան   |
| Ռ.Ա. Հովհաննեսյան | Ա.Ա. Պետրոսյան     |
| Կ.Հ. Մամիկոնյան   | Ա.Թ. Մոսիկյան      |
| Լ.Ա. Ավոյան       | Ա.Ս. Հարությունյան |

**ԵՐԵՎԱՆ . 2020 . 4**



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ

НОМЕР 4  
2020

**АРМЯНСКИЙ ЖУРНАЛ  
СУДЕБНОЙ ЭКСПЕРТИЗЫ И КРИМИНАЛИСТИКИ**

Основан в 2019 году

*Редакционный совет*

*Главный редактор*

**Овсепян А.Н.**

*Ответственный секретарь*

**Мосикян А.Т.**

*Члены редакционного совета*

Агасян А.В.	Агузумцян Р.В.
Аракелян С.В.	Виейра Д.Н. (Португалия)
Воскянян П.С.	Гахнапетян А.П.
Гукасян А.П.	Енгибарян В.Г.
Клюев А.Н. (Украина)	Минасян С.А.
Ованесян Р.А.	Папоян А.В.
Рувин А.Г. (Украина)	Саакян В.Г.
Усов А.И. (Россия)	Чахоян А.С.

*Редакционная коллегия*

Воскянян П.С.	Гахнапетян А.П.
Ованесян Р.А.	Петросян А.А.
Мамиконян К.О.	Мосикян А.Т.
Авоян Л.А.	Арутюнян А.С.

**ЕРЕВАН • 2020 • 4**

© Национальное бюро экспертиз



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL BUREAU OF EXPERTISES

NUMBER 4

2020

**ARMENIAN JOURNAL  
OF FORENSIC EXPERTISE AND CRIMINALISTICS**

Founded in 2019

*Editorial Board*

*Editor-in-Chief*

**A.N. Hovsepyan, Ph.D**

*Assistant editor*

**A.T. Mosikyan**

*Members of Editorial Board*

A.V. Aghasyan	R.V. Aghuzumtsyan
S.V. Arakelyan	A.P. Gahnapetyan
A.P. Ghukasyan	R.A. Hovhannisyan
O.N. Kliuiev (Ukraine)	A.I. Usov (Russian)
S.A. Minasyan	A.V. Papoyan
A.G. Ruvn (Ukraine)	D.N. Viera (Portugal)
P.S. Voskanyan	V.G. Yengibaryan

*Editorial team*

P.S. Voskanyan	A.P. Gahnapetyan
R.A. Hovhannisyan	A.A. Petrosyan
K.H. Mamikonyan	A.T. Mosikyan
L.A. Avoyan	A.S. Harutyunyan

**YEREVAN · 2020 · 4**

© National Bureau of Expertises





### *Հարգելի Ընթերցող,*

Ձեզ եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրման 15-րդ տարեդարձի առթիվ թողարկված «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» վերտառությամբ գիտական պարբերականի հերթական՝ չորրորդ համարը:

Կարևոր եմ համարում տեղեկացնել, որ ԴՓՔՀՀ-ի չորրորդ համարի թողարկմանը զուգահեռ պարբերական խմբագրական խորհրդի կողմից միջոցներ են ձեռնարկվել 2021թ.-ից պարբերականը՝ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված

գիտական հրատարակությունների ցանկում ընդգրկելու համար և հաշվի առնելով այն, որ պարբերականն իր մեջ միավորում է դատափորձագիտական ոլորտի ընդհանուր և մասնավոր հիմնախնդիրների վերաբերյալ դատական փորձագետների, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների, ինչպես նաև իրավունքի և հարակից տարբեր ոլորտները ներկայացնող մասնագետները նշված ցանկում պարբերականի ընդգրկման հանգամանքն առավել կարևոր հարթակ կձևավորի ոլորտի մասնագետների համար՝ հնարավորություն ընձեռնելով իրենց գիտական աշխատանքների արդյունքները տպագրել Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված գիտական հրատարակությունում:

Խմբագրական խորհուրդը բժախնդրորեն պահպանում է ԴՓՔՀՀ պարբերականում տպագրվող գիտական աշխատանքների պատշաճ մակարդակը և սահմանված չափանիշներին համապատասխանությունը՝ նպատակ ունենալով ապահովել ամսագրի ոլորտն տեղը գրախոսվող գիտական պարբերականների շարքում:

Ուրախ կլինենք տեսնել Ձեր գիտական աշխատանքների լավագույն արդյունքները ԴՓՔՀՀ պարբերականի հաջորդ համարներում:

*Հարգանքով՝*

*Ժշկական գիտությունների թեկնածու Ա.Ն.Հովսեփյան*



*Уважаемый Читатель,*

Представляю Вам очередной четвертый номер периодического научного издания «Армянский журнал судебной экспертизы и криминалистики», основанный по случаю 15-летней годовщины создания Государственной некоммерческой организации «Национальное бюро экспертиз» Национальной академии наук Республики Армения.

Считаю важным проинформировать, что параллельно с выходом четвертого номера «АЖСЭК» редакционная коллегия журнала начала процедуру по включению журнала с 2021 года в перечень научных изданий утвержденных Высшим аттестационным комитетом РА. Учитывая, что журнал объединяет взгляды на частные и общие проблемы судебной экспертизы и криминалистики судебных экспертов, научных работников, а также специалистов, представляющих разные области права и различные смежные сферы, включение журнала в упомянутый перечень сформирует на текущий момент наиболее важную платформу для специалистов данной области, предоставив возможность публиковать результаты своих исследований в научном издании, из перечня, утвержденного Высшим аттестационным комитетом.

Редакционная коллегия неукоснительно поддерживает должный уровень и соответствие установленным критериям научных работ, публикуемых в периодическом издании «Армянский журнал судебной экспертизы и криминалистики», с целью обеспечить особое место журнала в ряду рецензируемых научных периодических изданий Республики Армения.

Будем рады видеть лучшие результаты Ваших научных работ в следующих выпусках журнала.

*С уважением,  
кандидат медицинских наук Овсепян А.Н.*



*Dear Reader,*

I would like to bring to your attention to the next fourth edition of the scientific journal “Armenian Journal of Forensic Expertise and Criminalistics”, published on the occasion of the 15th anniversary of the establishment of “National Bureau of Expertise” State Non-Profit Organization of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

I consider it important to inform that in parallel with the publication of the fourth edition of “AJFEC”, the Editorial Board of the journal has begun the procedure for including the journal from 2021 in the list of scientific publications approved by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia. Taking into account that the journal brings together views of forensic experts, researchers, as well as specialists representing law and various related fields on general and specific issues in the field of forensic science, the inclusion of the journal in the above-mentioned list will provide a more powerful platform for specialists in the field, making it possible to publish the results of their research in a scientific publication included in the list approved by the Supreme Certifying Committee.

The editorial board strictly maintains the proper level and compliance with the established criteria of scientific works published in the journal “Armenian Journal of Forensic Expertise and Criminalistics”, in order to ensure the journal’s unique place among the peer-reviewed scientific periodicals of the Republic of Armenia.

We would be glad to see the best results of your scientific work in the next editions of the journal.

*Sincerely,*

*Argam Hovsepyan, PhD*



## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱԽՄԱՆ ՊԱՀԻՆ ԱՐԱԳԱԶԱՓԻ ՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՈՎ

### Աղայան Ռ.Ս, Աղայան Ս.Ռ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան

Հողվածում ներկայացված է վթարված տրանսպորտային միջոցի հետազոտության ընթացքում արագաչափ սարքի ցուցիչի միջոցով տրանսպորտային միջոցի մինչև ընդհարումն ունեցած արագության մեծության պարզումը՝ այն պարագայում, երբ տրանսպորտային միջոցների ընդհարման ժամանակ հարվածից հետո տեղի է ունենում շարժիչ կանգ և էլեկտրական կուտակիչ մարտկոցի քայքայում: Նշվում է, որ քանզի հիմնականում ավտոմեքենաների էլեկտրական կուտակիչ մարտկոցները տեղադրված են լինում շարժիչի խցիկի առջևի մասում, ապա դիմացից հարվածի դեպքում տեղի է ունենում էլեկտրական կուտակիչ մարտկոցի քայքայում: Հողվածում ներկայացվում է, որ նման պայմաններում փորձագետին հնարավորություն է ընձեռվում պարզել տրանսպորտային միջոցի արագությունը՝ ելնելով դրա քայլային էլեկտրաշարժիչով հագեցված արագաչափ սարքի ցուցիչի լույս սլաքի ցուցմունքից:

**Բանալի բառեր.** արագաչափ սարքի սլաք, ավտոմեքենա, էլեկտրական կուտակիչ մարտկոց, SU ընդհարում, փորձագետ:

Ավտոմեքենայի արագաչափը դա չափիչ սարք է նախատեսված ավտոմեքենայի շարժման ակնթարթային արագությունը որոշելու համար: Ցուցմունքը տրվում է կիլոմետր ժամում (կմ/ժ), կամ ինչպես Ամերիկայում՝ մղոն ժամում: Հիմնականում դրանք լինում են երկու տեսակի. անալոգային (մեխանիկական) և թվային սարքեր: Որոշ ժամանակակից ավտոմեքենաների վրա դասական սլաքավոր ցուցիչի փոխարեն հայտնվել է թվային (տես լուսանկարներ 1 և 2):



Լուսանկար 1



Լուսանկար 2

Բայց կան ավտոմեքենաներ, որոնց արագության ցուցիչ սարքն ունի ինչպես սլաքավոր ցուցիչ, այնպես էլ միաժամանակ թվային տեսքի ցուցիչ (տես լուսանկար 3):

*Թղթակցական հասցեն՝* Աղայան Ռուբեն, ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն; aghayan@rambler.ru



Լուսանկար 3

Նշված միայն թվային տեսքի սարքերով արագության հստակ մեծությունը հեշտ է որոշվում, բայց այնուամենայնիվ այն ունի որոշակի իներտություն: Օրինակ, շատ բարդ է մայրուղով 110 կմ/ժ արագությամբ ընթանալու դեպքում արագությունը արագ իջեցնել մինչև թույլատրելի 80 կմ/ժ մեծության: Թվային տեսքով սարքերի ցուցմունքը ճշգրիտ չէ սլաքավոր սարքերի ցուցմունքից, քանի որ դրանք ունեն նույն անճշտությունը: Արդյոք իմաստ ունի հետևել արագության ավելացմանը կամ նվազմանը մեկ կիլոմետր ժամով, իհարկե ոչ, դա միայն գրավիչ է և իր ձևով գեղեցիկ է: Որոշ արտադրողներ իրենց ավտոմեքենաների վրա տեղադրում են սարքերի վահանակները համակարգչային ցնցող գրաֆիկայով. դրանց թվատախտակները կարող են գույնը փոխել էկոլոգիապես կանաչից մինչև արծաթագույնի կամ կարմիրի: Մյուս կողմից, պրեմիում մոդելների ավտոմեքենաների վրա հատկապես «կենդանի» սլաքները համարվում են հատուկ ձևավոր, դա նման է շվեյցարական մեխանիկական ժամացույցներին:

Հետին տանող անիվներով ավտոմեքենաների արագաչափը հսկում է արագությունների փոփոխման տուփի երկրորդային լիսեռի պտույտները և ըստ դրա հաշվարկվում է արագությունը: Նշանակում է, որ ցուցմունքը կախված է՝ տանող անվաղողերի չափսերից, հետևի կամրջակի փոխանցման թվից և սարքի սեփական անճշտությունից:

Առջևի տանող անիվներով ավտոմեքենաների արագաչափը արագությունը չափում է հիմնականում առջևի ձախ անվի շարժաբերի օգնությամբ: Նշանակում է, որ անճշտությանը, անվաղողերի չափսերից կախված, ավելանում է էֆեկտիվությունը նաև կախված ճանապարհի շրջադարձերի մեծությունից. դեպի ձախ շրջադարձի ժամանակ կլինի մի փոք քիչ, համեմատած միջին դիրքի հետ և մի փոք շատ աց՝ շրջադարձի դեպքում:

Համաձայն EՅՔ ՕՕՏ N39 Կանոնների ավտոմեքենաների արագաչափերը արտադրվում են մի փոքր անճշտությամբ՝ այսինքն փաստացի ցուց են տալիս իրական արագությունից մի փոքր ավելի շատ արագություն (բոլոր դեպքերում արագությունը ցույց են տալիս ավելի շատ): Տվյալ դեպքում վարորդներն, այսպես ասած, ստանում են որոշակի «բոնուս», որի շնորհիվ պահպանում են սահմանված արագության ռեժիմը: Եթե ինչ-որ տեղ թույլատրելի շարժման արագությունը 90 կմ/ժ է, ապա արագաչափի սլաքի գտնվելն այդ նշագծի վրա երաշխավորում է, որ տվյալ սահմանափակումը կպահպանվի: Հենց այդպես էլ մենք անում ենք տան կամ ձեռքի ժամացույցները մի քանի րոպե առաջ գցելով, որպեսզի ապահովագրվենք ուշացումից: Վերը շարադրվածը վերաբերում է սարքերին և դրանց հետ կապված ավտոմեքենայի համակարգերին: Անցած դարի 30-ական թվականներից սկսած և սովետական արտադրության ավտոմեքենաների վրա արագաչափի ցուցիչ սարքը շարժման մեջ էր դրվում մեխանիկական շարժաբերով՝ ճկուն լիսեռով, որոնք մի քանի զույգ պլաստմասսե ատամնանիվներով կապված

էին փոխանցման տուփի երկրորդային լիսեռից: Շարժաբերը աշխատանքի ընթացքում մաշվում էր և արագաչափի սլաքը սկսում էր թրթռալ թվատախտակի վրա և հետո՝ առանց դիմադրության ընկնում էր: Անփորձ վարորդներին իհարկե այս հանգամանքը հիասթափեցնում էր, առավել ևս երթևեկել առանց արագության վերահսկման, ծայրահեղ անսովոր է (առավել ևս արգելված է) [1]: Նշվածից ելնելով՝ ներկայումս բոլոր ավտոարտադրողներն անցել են թվային արագաչափերի արտադրությանը:

Դժվար չէ հասկանալ, թե ինչու է արագաչափ սարքը «չափազանցնում» և ցույց տալիս մեծ արագություն: Առաջին հերթին՝ վարորդը կունենա արագության ռեժիմը խախտելու և հետևաբար տուգանքներ ստանալու ավելի փոքր հնարավորություն, երկրորդ հերթին՝ եթե արագաչափն իրական արագությունը ցույց տար փոքրացված, ապա ավտովարորդները ավտոարտադրողների դեմ դատական հայցեր կներկայացնեին, ապացուցելով, որ վթարներն ու տուգանքներն առաջացել են ոչ ճիշտ ցուցմունքների հետևանքով:

Բայց ինչու՞ արագաչափը պարտադիր պետք է «խաբի». բանը նրանում է, որ նրան դժվար է լինել ճշգրիտ, ինչպես շատ այլ չափիչ սարքերին: Ավտոմեքենայի շարժման արագությունը սովորաբար որոշվում է անվի պտույտով և կախված է անվի տրամագծից, իսկ այն անկայուն՝ փոփոխական է:

Արագաչափ սարքն ունի աշխատանքի մեկ յուրահատկություն, որի մասին գիտեն շատ ավտովարորդներ: Սարքը միշտ ցույց է տալիս ավելի բարձր արագություն, որպեսզի այն չհրահրի արագության խախտման: Դա համապատասխանում է EՅԿ ՕՕԻ N39 Կանոնների, որի համաձայն՝ «արագությունն ըստ սարքի պետք է ցածր չլինի տրանսպորտային միջոցի փաստացի արագությունից» [2]: Եթե ավտոմեքենան շարժվում է 80 կմ/ժ արագությամբ, ապա արագաչափի սլաքը պետք է ցույց տա 81,1 կմ/ժ-ից մինչև 85,0 կմ/ժ: Որքան մեծ է արագությունը, այնքան մեծ է պլանավորված «անճշտությունը»:

Փորձաքննության կատարման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել արագաչափ սարքերը արտադրող գործարանի կողմից արված այս «անճշտության» հանգամանքը: Այսինքն, արագաչափունը կարող է լինել ավելի փոքր, քան այն, ինչ ցույց է տալիս արագաչափ սարքը: Բայց և այնուամենայնիվ չի կարելի բացառել, որ արագաչափ սարքը ցույց է տալիս ճիշտ արագությունը:

Իհարկե նկարագրված մեթոդիկայով (արագաչափի ցուցիչի միջոցով) արագության որոշումը որոշ դեպքերում կարող է լինել ստուգողական, եթե նույնիսկ վարորդն ընդհարմանը նախորդող պահին արգելակած լինի և մեքենայի ընթացքը դանդաղեցված լինի: Այսպիսի ցուցմունքը կարող է լինել յուրատեսակ մինիմալը:

Տվյալ տեղեկություններով հնարավոր է կատարել, այսպես ասած, ավտոմեքենայի ձգում, այսինքն պարզել, թե որտեղ է գտնվել մեկ, երկու, երեք վայրկյան առաջ ավտոմեքենան: Քննության համար դրանք արժեքավոր տվյալներ են, որոնք թույլ են տալիս ենթադրել, թե ինչպես է գործել վարորդն անմիջապես ընդհարմանը նախորդող պահին:

Ժամանակակից ավտոմեքենաների արագաչափ սարքերի միջին անճշտությունը 10% է՝ 200 կմ/ժ արագության դեպքում: Իմիջայլոց անճշտության տոկոսային կախվածությունն արագության մեծության հետ որպես կանոն ուղղագիծ չէ: Դա նշանակում է, որ 100 կմ/ժ-ի դեպքում իրական արագության տարբերությունը կարող է կազմել 5-10 կմ/ժ: Մինչև 60 կմ/ժ արագության դեպքում անճշտություն գրեթե չկա կամ մինիմալ է:

Ինչպես է ազդում ավտոմեքենայի կառուցվածքով նախատեսված անվադողերի չափսերի փոփոխությունն արագաչափի ցուցմունքի վրա. 185/60R14 չափսի անվադողերը 195/50R15 չափսի անվադողերով կամ հակառակը փոխելու դեպքում ցուցմունքը փոխվում է 2,5%-ով (օրինակ՝ 90

կմ/ժ-ի դեպքում մեքենայի իրական արագությունը 92,78 կմ/ժ է): Այսինքն իրական մեծություններն այստեղ չեն համապատասխանում: Եվ երբ կա 10 կմ/ժ սխալանքի թույլտվություն, որից հետո է տուգանք առաջադրվում, ապա տվյալ դեպքում դա այդքան էլ էական չէ: Իսկ երբ անվադողերը հակառակ են փոխարինվել՝ ցածրից դեպի բարձրը, ցուցմունքը կլինի ավելի փոքր քան իրականն է: Հարցը նրանում է, թե այդ անճշտությունը սարքի սխալանքի հետ ինչպե՞ս կհամադրվի, ինչպե՞ս կազդի անվադողերի մաշվածությունը, օդի ճնշումը անվադողերում (ցածր կամ բարձր): Անվադողերի ներսի ցածր ճնշումն անճշտությունը շեղում է դեպի մեծացման կողմը: Օգտակար տեղեկատվություն արագության մասին կարող է տալ ավտոմեքենայի բորտ համակարգիչը: Իմիջայլոց, նավիգացիոն սարքերը դրանք գերազանց օգնական են ավտոմեքենայի իրական արագությունը որոշելու գործում, դրանց ցուցմունքներն առավել մոտիկ են էտալոնայինին: Արբանյակային չափումների անճշտություններն աննշան են, և ինչպես ենթադրում են որոշները՝ կախված չեն տեղանքի ռելիեֆից:

Եթե ավտոմեքենայի արագաչափ սարքն արագության մեծությունը ցույց է տալիս մղոններով, ապա ինչպե՞ս այն փոխարկել կիլոմետր ժամի: Դա վերաբերում է այն ավտոմեքենաներին, որոնք արտադրվել են Ամերիկայում, որտեղ սարքերը չափաբաժանվում են անսովոր թվերով (հաշվելիս՝ 1 մղոնը հավասար է 1,6 կմ-ի):

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ քննչական մարմիններին հետաքրքրում է SU արագությունը ընդհարմանը նախորդող պահին, սակայն դեպքի վայրում անվադողերի հետքերը շատ դեպքում բացակայում են. նման պայմաններում փորձագետը նշված հարցին տալիս է դրա որոշման անհնարինության մասին պատասխան: Տրանսպորտային միջոցների ընդհարման ժամանակ (հատկապես հանդիպակաց և բարձր արագության դեպքում) հարվածից հետո տեղի է ունենում շարժիչի կանգ և էլեկտրական կուտակիչ մարտկոցի քայքայում, քանի որ հիմնականում ավտոմեքենաների էլեկտրական կուտակիչ մարտկոցները տեղադրված են լինում շարժիչի խցիկի առջևի մասում: Այս դեպքերում հնարավորություն է ստեղծվում գնահատել տրանսպորտային միջոցի արագությունը՝ ելնելով դրա քայլային էլեկտրաշարժիչով հագեցված արագաչափ սարքի ցուցիչի ցուցմունքից: Ժամանակակից տրանսպորտային միջոցները կահավորված են՝ այսպես կոչված էլեկտրոնային վահանակով, որը միացված է վերահսկվող համակարգերին միայն էլեկտրոհաղորդիչ լարերի խրցով, արագաչափի ճկուն լիսեռը որպես այդպիսին, նշված ավտոմեքենաների վրա բացակայում է: Նման տիպի սարքերի վահանակներն իրենց մեջ ներառում են՝ արագաչափը, ավտոմեքենայի ընդհանուր և օրական կատարված վազքի մեծությունների հաշվիչը, տախոմետրը, վառելիքի քանակի ցուցիչը, շարժիչի հովացման համակարգի հեղուկի ջերմաստիճանի ցուցիչը, հսկիչ լամպերը և ցուցիչ սարքերի լուսավորման լամպերը: Տվյալ տեսակի սարքերի վահանակը կառավարվում է հատուկ էլեկտրոնային մոդուլի կողմից, որն ազդանշաններ է ստանում համապատասխան տվիչներից: Ջերմաստիճանի և վառելիքի քանակի ցուցիչների մեխանիզմները մագնիսաէլեկտրական տեսակի են [3]: Արագաչափի և տախոմետրի սլաքները շարժման մեջ են դրվում քայլավոր էլեկտրաշարժիչների միջոցով: Համապատասխանաբար, եթե այսպիսի տեսակի սարքերի վահանակի կառավարվող մոդուլին դադարեցվի էլեկտրական հոսանքի մատակարարումը, ապա վառելիքի քանակի ցուցիչի և ջերմաստիճանի ցուցիչի սլաքները զսպանակի ազդեցությամբ կվերադառնան ելման դիրքերը, քանի որ էլեկտրոմագնիսների փաթույթները և դրանց հաղորդակները հոսանքազրկված կլինեն: Արագաչափի և տախոմետրի սլաքները, էլեկտրական հոսանքի մատակարարումը քայլային էլեկտրաշարժիչներին դադարեցվելուց հետո, կմնան իրենց դիրքերում, քանի որ նշված սարքերի սլաքները կարող են վերադառնալ ելման դիրք («0»-ական դիրքի) միայն քայլային



Էլեկտրաշարժիչների օգնությամբ:

Ճանապարհատրանսպորտային պատահարներին մասնակից ավտոմեքենաների արագաչափերի արագության ցուցիչ սլաքների որոշ թվերի վրա լուված լուսանկարները հաճախ առաջ են բերում օրինաչափ հարց, որքանո՞վ է ճիշտ հաշվի առնել, որ արագությունը եղել է ընդհարումից առաջ հենց այդքան, որքան որ ցույց է տալիս լուված սլաքը: Որոշ դեպքերում արագաչափի ցուցիչի լուված սլաքը հնարավորություն է տալիս հստակ վերարտադրել, թե ինչպես է զարգացել իրավիճակը:

Սկսենք նրանից, թե ինչու է ընդհարումից հետո արագաչափի ցուցիչ սլաքը մնում ինչ որ ֆիքսված դիրքում: Ինչպես կարելի է ենթադրել՝ դա պատահականություն է, այլ կոնստրուկցիայի յուրահատկություն: Ինչպես վերը նշվեց՝ որոշ ժամանակակից ավտոմեքենաներ լրակազմված են քայլավոր էլեկտրաշարժիչով սարքերի վահանակով, որն էլ արագաչափի ցուցիչ սլաքին շարժման մեջ է դնում: Ազդանշանը ստանում է այն հանգույցից, որից հաշվարկվում է արագությունը: Եթե ընդհարումից հետո ավտոմեքենայի շարժիչը կանգ է առնում, կամ քայլավոր է էլեկտրական մարտկոցը, հետևաբար տեղի է ունենում արագաչափի ցուցիչ սլաքին շարժման մեջ դնող քայլային էլեկտրաշարժիչի սնուցման մոդուլի էլեկտրական շղթայի խզում: Տվյալ դեպքում արագաչափի ցուցիչ սարքի վրա ֆիքսված է մնում այն ցուցմունքը, որը համապատասխանում է հարվածի պահի արագությանը: Քանի որ արագաչափի ցուցիչ սարքի սլաքը շարժման մեջ է դրվում քայլային էլեկտրաշարժիչը, հետևաբար էլեկտրականության բացակայության դեպքում այն ուղղակի չի կարողանում վերադառնալ սկզբնական՝ այսպես կոչված զրոյան դիրքին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ վերը նշված տեսակի արագաչափերով ավտոմեքենաների բախումից հետո, եթե քայլավոր է էլեկտրական կուտակիչ մարտկոցը և շարժիչը կանգ է առնում, ապա կոմբինացված ցուցիչ սարքերի վահանակի վրա պետք է ֆիքսվի արագության այն մեծությունը, որը համապատասխանում է բախման պահի արագության մեծությանը, այսինքն՝ այն պահին, երբ տեղի է ունեցել կառավարող մոդուլի սնման էլեկտրական հոսանքի խզում: Եթե տեղի է ունենում քայլային էլեկտրաշարժիչի ընթացքի կանգ, ապա դրանից հետո ցուցիչ սլաքի պատահական տեղաշարժ հնարավոր չէ, ինչն ավելի ակնհայտորեն երևում է նշված տեսակի ցուցիչ սարքի ապալրակազմված վիճակի պատկերում՝ քայլավոր էլեկտրաշարժիչից պտույտը փոխանցվում է ցուցիչ սլաքին մի քանի աստիճան ատամնանիվավոր փոխանցումով (տես լուսանկար 4):



Լուսանկար 4

Այստեղ նշենք, որ արագաչափ սարքի ցուցիչ սլաքի պատահարից հետո որոշակի դիրքում լուսան դեպքում արագության մեծության որոշման նպատակով փորձաքննություն նշանակելու համար անհրաժեշտ են հետևյալ նախապայմանները.



- առաջին, անհրաժեշտ է, որպեսզի սարքերի վահանակը լրակազմված լինի քայլային էլեկտրաշարժիչով,
- երկրորդ, պատահարի հետևանքով պետք է էլեկտրական սնուցումը վերացած լինի,
- երրորդ, սարքերի վահանակը պետք է մնացած լինի անվնաս:

Տրանսպորտային միջոցի հետազոտության ընթացքում փորձագետը պետք է ուշադրություն դարձնի արագաչափի ցուցմունքի վրա, և այն անհրաժեշտ է ֆիքսել՝ լուսանկարել: Անհրաժեշտության դեպքում սարքերի վահանակը առգրավվում է և հետագայում լաբորատոր պայմաններում կատարվում է վերջինիս հետազոտություն: Պարզվում է դրա կառուցվածքը, մականշումները, վնասվածքների առկայությունը (եթե կան վնասվածքներ, ապա որքանով են կրիտիկական), կատարվում է դրա կազմաքանդում: Եթե նույնիսկ նշված ընթացակարգը համարվում է հասարակ, այն իրականացնող փորձագետը պետք է ունենա հատուկ որակավորում տվյալ տեսակի հետազոտություն իրականացնելու համար: Սովորաբար նման պրոցեսը զբաղեցնում է մի քանի օր:

Ժամանակի մեծ մասը ծախսվում է սարքի ապալրակազմման [4], սլաքի ցուցմունքի գրաֆոանալիտիկ չափումների՝ սլաքի ճիշտ դիրքի պարզման (տես լուսանկար 5) և հաշվարկների անցկացման վրա:



Լուսանկար 5

Շատ դեպքերում սարքերի վահանակի վրայի արագաչափի սարքի առգրավման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ ոչ բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում է, որ տեղի ունենում հոսանքի շղթայի խզում, կամ էլ վնասվածքները այնպիսի էական են, որ սարքերի վահանակը նույնպես ոչնչացված (քայքայված) է լինում:

Որպես կանոն, փորձագիտական հետազոտությունն անցկացվում է հիմնականում ավտոմեքենաների արագաչափի սարքերի մասով: Ինչ վերաբերում է մոտոցիկլներին, ապա դրանց մեծամասնությունն ունեն թվային ցուցիչով արագաչափի սարքեր, որոնց փորձաքննության անցկացումն անհնարին է: Սակայն քննիչը կարող է հարցադրում կատարել, օրինակ՝ պարզել շարժման հնարավոր արագությունը՝ ելնելով տախոմետրի ցուցմունքից, վթարի պահին միացված փոխանցումից և արագությունների փոխանցման տուփի փոխանցման թվից: Այստեղ պետք է նշել, որ ամենապարզ միջոցը, որը թույլ է տալիս արժանահավատորեն որոշել օբյեկտի շարժման արագությունը դա դեպքի պահին կատարված տեսահոլովակների փորձաքննության անցկացումն է:

Տրանսպորտային միջոցների վնասվածքներից ելնելով դրանց շարժման արագության որոշու-

մը դա փորձաքննության հատուկ տեսակ է: Դրա համար անհրաժեշտ է հավաքել մեծ ծավալով տվյալներ՝ սկսած ընդհարման տեղում տրանսպորտային միջոցների կոնկրետ դիրքից մինչև ավտոմեքենաների դեֆորմացված տարրերը: Հետո նշված տվյալները պետք է վերլուծության ենթարկել և ներմուծել համապատասխան արագության որոշման հաշվարկ կատարող հատուկ ծրագիր:

Կարելի է նշել, որ քայլավոր էլեկտրաշարժիչով արագաչափերը որոշակիորեն հնացած տեխնոլոգիա են: Ավտոարտադրողներն ավտոմեքենաների վրա սկսել են տեղադրել էլեկտրոնային բլոկներ, այսպես կոչված՝ «սև արկղերին» նմանվող, որոնք ֆիքսում են ոչ միայն արագությունը, այլև ավտոմեքենայի շարժման շատ այլ պարամետրեր: Դա թույլ է տալիս մասնագետներին արժանահավատորեն և շատ քիչ ժամանակաձախսով պարզել, թե ինչպե՞ս է շարժվել ավտոմեքենան, ինչ է ձեռնարկել վարորդը, եղել են արդյոք անսարքություններ և այլն:

Այսպիսով, վթարված տրանսպորտային միջոցի հետազոտության ընթացքում, երբ տրանսպորտային միջոցների ընդհարման ժամանակ հարվածից հետո տեղի է ունենում շարժիչի կանգ և էլեկտրական կուտակիչ մարտկոցի քայքայում, փորձագետը պետք է ուշադրություն դարձնի արագաչափի սլաքի ցուցմունքին: Եթե արագաչափ սարքը քայլային էլեկտրաշարժիչով տեսակի է, ապա արագաչափ սարքի ցուցիչի սլաքը լուվում է: Տվյալ դեպքում արագաչափի ցուցիչ սարքի վրա ֆիքսված է մնում այն ցուցմունքը, որը համապատասխանում է հարվածի պահին տրանսպորտային միջոցի արագությանը:

## Գրականության ցանկ

1. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին (<https://www.arlis.am/>):
2. ГОСТ 12936-2017 Спидометры автомобильные с электроприводом. Технические требования и методы испытаний.
3. Пелишенко А.Г. Определение скорости движения транспортного средства в момент удара по показаниям его спидометра (Теория и практика судебной экспертизы. Научно-практический журнал 1(9) 2008.) Москва : Наука; 2008, с. 94-97.
4. Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի դատափորձագիտական հետազոտության հիմունքները: /Դատական ավտոտեխնիկական փորձաքննություն: Մաս 3-րդ, թողարկում 1-ին/: Կիև, 1987:

## ОПРЕДЕЛЕНИЕ СКОРОСТИ ДВИЖЕНИЯ АВТОМОБИЛЕЙ В МОМЕНТ СТОЛКНОВЕНИЯ ПО ПОКАЗАНИЯМ СПИДОМЕТРА

**Агаян Р.С., Агаян С.Р.**

*Статья посвящена детальному анализу алгоритма определения величины скорости транспортного средства до столкновения при осмотре последнего с помощью индикатора прибора спидометра. Значительное внимание в статье уделяется случаю, когда при столкновении транспортных средств после удара происходит остановка двигателя и выход из строя аккумуляторной батареи. Отмечается, что поскольку электрические аккумуляторы автомобилей в основном расположены перед моторным отсеком, то в случае лобового удара*

электрический аккумулятор выходит из строя. В статье излагается взгляд, что в подобных случаях в ходе экспертного исследования эксперт может определить скорость автомобиля на основе остановленной стрелки индикатора спидометра.

**Ключевые слова:** стрелка спидометра, автомобиль, электробатарея, столкновение ТС, эксперт.

## DETERMINATION OF THE SPEED OF MOVEMENT OF VEHICLES AT THE MOMENT OF COLLISION ACCORDING TO SPEEDOMETER

***Aghayan R., Aghayan S.***

*The article is devoted to a detailed analysis of the algorithm for determining the value of the vehicle speed before collision when inspecting the latter taking into account the indicator of the speedometer. Considerable attention in the article is paid to the case when, after a collision of vehicles, the engine stops and the battery fails. It is noted that since the electric batteries of cars are mainly located in front of the engine compartment, in the case of a frontal impact, the electric battery is damaged. The article discusses that in such cases, during expert examinations, an expert can determine the speed of a car based on a stopped needle of the speedometer.*

**Key words:** speedometer needle, car, electric battery, vehicle collision, expert.

## ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

**Գալստյան Ա.Գ., Չարչյան Ա.Գ., Սահակյան Ա.Ա.,  
Մարտիրոսյան Տ.Ռ., Մաթոսյան Ա.Գ.**

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,  
Իզմիրյան բժշկական կենտրոն,  
Երևան, Հայաստան*

Հոդվածում ներկայացված են ռազմաբժշկական փորձաքննության մեթոդանության և հայտնակետերի արդի մի շարք մոտեցումներ: Թվարկված են կլինիկական փորձաքննական եզրակացության տրման պահանջները, ինչպես նաև նշված են ռազմաբժշկական փորձաքննության իրավական կարգավորումները:

Տվյալ հոդվածում վերլուծվում է գործառույթային խանգարումների աստիճանների դասակարգումը, որով իրականացվում է ռազմաբժշկական փորձաքննության գործընթացը:

**Բանալի բառեր.** ռազմաբժշկական փորձաքննություն, կլինիկական փորձաքննական եզրակացություն, գործառույթի խանգարում, փորձաքննական կանխորոշում, զինվորական ծառայության պիտանիության չափորոշիչներ:

Հայաստանի Հանրապետության անկախացումը, Արցախյան հերոսամարտը, ինչպես նաև Հանրապետության արդի աշխարհաքաղաքական վիճակը խիստ կարևորում են ՀՀ զինված ուժերին առաջադրվող պահանջները: Շարունակաբար ՀՀ զինված ուժերը համալրվում են ժամանակակից, առաջադիմական գիտական նվաճումներով՝ զինատեսակներով, տեխնիկայով և ռազմական տեխնոլոգիաներով:

Զինված ուժերի մարտունակության բարձրացման գործընթացում առանձնահատուկ տեղ է հատկացվում անձնակազմով համալրմանը: Խնդիրների արդյունավետ լուծման համար զինամթերքը, ռազմական տեխնիկան, տեխնոլոգիաներն օգտագործող և կառավարող զինվորն արհեստավարժ լինելուց բացի պետք է լինի ֆիզիկապես առողջ, օժտված լինի բարոյահոգեբանական բարձր հատկանիշներով: Ռազմաբժշկական փորձաքննության խնդիրների լուծման արդիականությունը անփոփոխ աճ է արձանագրում, որն արտահայտվում է ՀՀ-ում անհրաժեշտ՝

- զինված ուժերը առողջ քանակակազմով համալրման գործընթացով,
- կանխարգելիչ, բուժական-ախտորոշիչ և վերականգնողական միջոցառումների իրականացմամբ,
- բարձր արհեստավարժություն ունեցող զինվորական մասնագետների առողջական պատճառներով որակագրկման կանխարգելմամբ և նրանց զինվորական ծառայությունը շարունակելու հնարավորության ընձեռնմամբ, ինչպես նաև նրանց առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրման գործընթացի կազմակերպմամբ,
- խեղման ծանրության աստիճանը որոշելու նպատակով ռազմաբժշկական փորձաքննության իրականացմամբ, որը սոցիալական իրավունքների իրացման հիմք է տալիս,
- զինվորական ծառայության հետ խեղումների պատճառական կապի որոշմամբ՝ զինծառայողների առողջական վիճակի պատճառով զինված ուժերից զորացրված զինծառա-

*Թղթակցական հասցեն՝ Սահակյան Սամվել Սուրենի, բժշկական գիտությունների թեկնածու, ռազմաբժշկական փորձաքննության դասավանդման խմբի պետ, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան; 0025, Կոռյունի փ.2, Երևան, ՀՀ; հեռ. (+374)-93-76-44-89, e-mail: drssahakyan@mail.ru*

յողների և քաղաքացիների սոցիալական ապահովման նպատակներով:

Փորձագետի աշխատանքը չափազանց պատասխանատու աշխատանք է, որում սխալներն անթույլատրելի են: Որքան անթույլատրելի է առողջ զորակոչիկին ազատել զինվորական ծառայությունից, սահմանափակելով նրա սահմանադրական իրավունքների իրացումը, այնքան անթույլատրելի է բանակ զորակոչել հիվանդ քաղաքացուն՝ նպաստելով նրա առողջական վիճակի վատթարացմանը, հնարավոր վաղաժամկետ զորացրմանը, զինվորական թոշակավորման ձևակերպմանը՝ քաղաքացու և հանրության համար բնորոշ ոչ նպաստավոր իրավիճակներ ստեղծելով:

Կլինիկական բժշկության և ռազմաբժշկական փորձաքնության գործընթացները ներառում են պացիենտի կամ փորձաքննվողի առողջական վիճակի ուսումնասիրություն, անհրաժեշտ կլինիկական, լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացում: Այս ամենի արդյունքում կլինիցիստը ձևակերպում է ախտորոշումը, որին հաջորդում է բուժական տակտիկայի մշակումը: Ռազմաբժշկական փորձաքնության դեպքում ձևակերպվում է կլինիկական փորձաքննական եզրակացությունը և տրվում է ռազմաբժշկական փորձաքննական եզրակացություն:

«Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են բժշկական փորձաքննության հետևյալ տեսակները.

- 1) ժամանակավոր անաշխատունակության,
- 2) բժշկասոցիալական,
- 3) ռազմաբժշկական,
- 4) դատաբժշկական,
- 5) դատահոգեբուժական,
- 6) դատաթմբաբանական,
- 7) թունաքիմիական:

Ռազմաբժշկական փորձաքննությունն անձի՝ զինվորական ծառայության պիտանիության կամ զինծառայողների կամ զինվորական ծառայությունից արձակվածների մոտ առկա հիվանդությունների կամ վնասվածքների՝ զինվորական ծառայության հետ պատճառահետևանքային կապի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումն է:» [1]:

Զինապարտների և զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) առողջական վիճակի հետազոտման և ռազմաբժշկական փորձաքննության նպատակն է որոշել՝

1) զինվորական հաշվառման, զորակոչի, զինվորական (կամ հավասարեցված) ծառայության անցնելու, պահեստազորային պատրաստության շրջանակներում պարտականությունների կատարման ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ նկատի ունենալով նրանց առողջական վիճակը և ֆիզիկական զարգացումը,

2) սպայական և ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների, ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների և ունկնդիրների, պարտադիր և պայմանագրային զինծառայության շարքային կազմերի, ռազմաուսումնական հաստատությունների (բարձրագույն ուսումնական հաստատությունների) դիմորդների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ ըստ նրանց առողջական վիճակի,

3) ռադիոակտիվ նյութերով, իոնացնող ճառագայթման այլ աղբյուրներով, հրթիռային վառելիքի բաղադրամասերով, էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու համար անձանց պիտանիությունը,

4) զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառ-

նական կապը,

5) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, ԽՍՀՄ նախկին զինծառայողների, Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքների վերացման մասնակիցների ստացած հիվանդությունների ու վնասվածքների, խեղումների հետևանքների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը [2]:

Ռազմաբժշկական փորձաքննության իրավական կարգավորումներն իրականացվում են 2017 թվականի նոյեմբերի 15-ի՝ N ՀՕ-195-Ն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն և N 405-Ն որոշումներով [2, 3, 4]:

Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

- 1) պիտանի է զինվորական ծառայության համար.
- 2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.
- 4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
- 5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
- 6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 7) կարիք ունի բուժման.
- 8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի.
- 9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի [4]:

Ռազմաբժշկական փորձաքննության գործընթացում հատուկ փոխհարաբերությունները և կապերն իրականացվում են ռազմաբժշկական փորձագիտության երեք օրենքով (ըստ Վ.Վ. Կուլիկովի) [5]:

Առաջին օրենք. առկա ռազմաբժշկական փորձաքննության իրականացում. Իրականացվում է առկա ռազմաբժշկական փորձաքննություն, որը քաղաքացու առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման աստիճանի ուսումնասիրությունն ու գնահատումն է փորձաքննության պահին:

Երկրորդ օրենք. ռազմաբժշկական փորձաքննության իրականացում բժշկափորձաքննական կանխորոշված ելքի դեպքում: Փորձաքննությունն իրականացվում է բժշկափորձաքննական կանխորոշված ելքի դեպքում, երբ հետազոտության և բուժման արդյունքներն արդեն իսկ հիմք են տալիս փորձաքննության ժամանակ կայացնելու ռազմաբժշկական փորձաքննական եզրակացություն զինվորական ծառայության պիտանիության մասին, և հետագա բուժումը փորձաքննության ելքի վրա չի կարող ունենալ որոշիչ նշանակություն:

Երրորդ օրենք. զինվորական ծառայության պիտանիության անհատական գնահատում: Ռազմաբժշկական փորձաքննության հիմնական եղանակը զինվորական ծառայության պիտանիության աստիճանի անհատական գնահատումն է: Ընդ որում՝ փորձաքննական մոտեցումը պետք է լինի տարբերակված՝ առաջին հերթին հաշվի առնելով փորձաքննվողի զինվորական ծառայության պայմաններին հարմարվելու գործառնությամբ ունակությունները: Ռազմաբժշկական փորձաքննական եզրակացությունը տրվում է՝ հաշվի առնելով հիվանդության բնույթը, նրա զարգացման աստիճանը, սրացումների հաճախականությունը, օրգանների և համակարգերի գործառնությամբ խանգարումների աստիճանը, բուժման արդյունավետությունը, հիվանդության ընթացքի կանխատեսումը, ինչպես նաև փորձաքննվողի տարիքը, մասնագիտությունը, զինված ուժերի այս կամ այն ստորաբաժանումում ծառայության առանձնահատկությունները, զինվո-

րական ծառայությունը շարունակելու դրդապատճառները: Հետևաբար, զինվորական ծառայության պիտանիության որոշման անհատական մոտեցման օրենքը փորձաքննվողի տարբեր ախտաբանությունների և վիճակների գնահատման ռազմաբժշկական փորձաքննական մոտեցումների հաջորդականության պահպանումն է, ընդհանուր առմամբ զինված ուժերը առողջ կամ գործնականում առողջ կազմով համալրելը, ինչպես նաև զինված ուժերում փորձառու մասնագետների, և առաջին հերթին՝ սպաների պահպանումն է:

Ռազմաբժշկական փորձաքննությունը բուժական կանխարգելիչ աշխատանքի կարևոր փուլ է, որի որակով են պայմանավորված հիվանդության ելքը և փորձաքննվողների՝ ծառայության համար պիտանիության աստիճանը:

Ախտորոշման աշխատանքները ճիշտ կազմակերպելու դեպքում իրականացվում է արդյունավետ բուժում, նվազում են բուժման ժամկետները և ավելացվում է շարք վերադարձվողների քանակը՝ առանց պիտանիության աստիճանի փոփոխության: Ոչ բավարար ախտորոշիչ և բուժական աշխատանքների դեպքում առողջական վիճակով պայմանավորված որոշ զինծառայողներ, լինելով զինծառայության համար ոչ պիտանի, ժամանակին չեն հայտնաբերվի և կհայտնվեն զինված ուժերում:

Առանց կանխարգելման և ժամանակին իրականացող շտկման միջոցառումների կայուն ձևափոխությունները դառնում են ողնաշարում կառուցվածքային փոփոխությունների, ներքին օրգանների հիվանդությունների, հարմարվողականության լարվածության զարգացման նախատրամադրող գործոն՝ հանգեցնելով աշխատունակության և կյանքի որակի էական նվազման, հասցնելով զգալի հոգեբանական և տնտեսական վնաս:

Առանձին նոզոլոգիաների ու ռազմաբժշկական փորձաքննական որոշումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու, որ ամենառիսկայինը ոչ պիտանի կատեգորիան է, որը նշանակում է.

- Ոչ պիտանի կատեգորիայի հետագա աճը կարող է ունենալ խիստ բացասական հետևանքներ զինված ուժերն անձնակազմով համալրելու տեսակետից, ավելացնել հաշմանդամությունը քաղաքացիական ազգաբնակչության շրջանում, նվազեցնել աշխատունակ անձանց թվաքանակը, դառնալ բավականին ծանր և անընդհատ հոգատարություն պահանջող ֆինանսական, բժշկական և սոցիալական բեռ հասարակության և պետության համար:
- Ոչ պիտանի կատեգորիայի արհեստական նվազեցումը տվյալ քանակակազմի զորակոչին առաջադրված պահանջները թուլացնելու, նրանց զինծառայության համար զինված ուժերում ոչ իրատեսական պայմաններ ստեղծելու տեսակետից կարճ ժամանակ անց հանգեցնելու է արդեն զինված ուժերում այդ անձանց հոսպիտալացման և երկարատև բուժման, ի վերջո վաղաժամկետ զորացրման, զինվորական թռչակավորման ձևավորման և զինվորական հաշմանդամության աճին՝ բնորոշ բավականին բացասական հետևանքներով [6]:

Ռազմաբժշկական փորձաքննական եզրակացության հիմնավորվածությունը պայմանավորված է հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման հավաստիությամբ: Ախտորոշման սխալը միշտ հանգեցնում է ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ սխալ եզրակացության կայացմանը:

Անհնար է տարանջատել ախտորոշման կառուցումը ռազմաբժշկական փորձաքննության տարրերից, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ:

Կլինիկական փորձաքննական եզրակացությունը փորձաքննվողի առողջական վիճակի վե-



րաբերյալ եզրակացություն է, որը բնութագրում է հիվանդության էությունը, բնույթը և ընթացքը, օրգանիզմի օրգան-համակարգերի գործառույթային վիճակը, նրա զինվորական ծառայության և զինվորական մասնագիտությունների պահանջների նկատմամբ հոգեֆիզիոլոգիական համապատասխանության գնահատումը, փորձաքննվողի զինվորական ծառայության պայմաններում առողջության վիճակի և շեղումների պատճառահետևանքային կապի որոշումը [7]:

Կլինիկական փորձաքննական եզրակացության կարևոր տարր է ախտորոշումը:

Ախտորոշումը բժշկական եզրակացությունն է փորձաքննվողի առողջության ախտաբանական վիճակի մասին: Հիվանդության ախտորոշումն արտահայտվում է տերմիններով, որոնք պետք է համապատասխանեն ընդունված դասակարգումներին և հիվանդությունների անվանացանկին: Ախտորոշման կառուցումը սերտորեն կապված է հիվանդությունների ուսմունքի՝ նոզոլոգիայի հետ, որի զարգացման մակարդակը պայմանավորում է հիվանդությունների դասակարգման ընդհանուր սկզբունքները՝ դրանց ծագումնաբանությունը, ախտաբանությունը, ընթացքը, բարդությունների բնույթը և առանձին ֆիզիոլոգիական համակարգերի գործունեության խանգարման աստիճանի վերաբերյալ գիտելիքները [8]:

Ռազմաբժշկական փորձաքննության համար ձևակերպված կլինիկական ախտորոշումը պետք է արտացոլի փորձաքննվող անձի առողջական վիճակը կլինիկական հետազոտության, ունեցած հիվանդությունների (վնասվածք, խեղում, վիրավորում, կոնտուզիա) հիման վրա, արտահայտված լինի տերմիններով, նոզոլոգիական միավորների անվանումներով, նշված հիվանդություններով, նրանց տեսակներով, ընթացքի տարբերակներով, գործող անվանացանկով և դասակարգմամբ [9]:

Ռազմաբժշկական փորձաքննության համար ձևակերպված կլինիկական ախտորոշումը անպայման պետք է պարունակի տարածուն ենթանոզոլոգիական բնութագիր, պետք է լինի՝

- նոզոլոգիական. պարունակի հիվանդության, վնասվածքի խեղման անվանումը հիվանդությունների գործող դասակարգման և անվանացանկին համապատասխան,
- ախտածագումնային. արտացոլի հիվանդության առանձին կլինիկական դրսևորումների միջև կապը, որոնք բնորոշում են ախտածագման և բարդությունների առանձնահատկությունները,
- մորֆոլոգիական. արտացոլի օրգանիզմում մորֆոլոգիական փոփոխությունների բնույթը և տեղակայումը,
- գործառույթային. արտացոլի օրգանիզմի առանձին օրգան-համակարգերի գործունեության բնույթը և աստիճանը,
- վերջնական:

Ռազմաբժշկական փորձաքննության պրակտիկայում ախտորոշման ձևակերպումը մեծ նշանակություն ունի: Ախտորոշելիս անհրաժեշտ է պահպանել գործող դասակարգումների տերմինաբանությունը, ներառել ախտաբանական պրոցեսի բնույթի գնահատականը և կանխատեսել աշխատունակության կորստի աստիճանը բժշկական փորձաքննության պահին: Ընդ որում՝ սուր հիվանդությունների (տրավմաների) հետևանքների դեպքում, երբ զինվորական ծառայության պարտականությունների կատարման ունակությունները միանշանակ վերականգնվելու են, ախտորոշման սկզբում ավելացվում է «վիճակ տարած» և նշվում է հիվանդությունը: Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ունակությունների կայուն կորստի դեպքում, երբ փոխվում է պիտանիության աստիճանը, և փորձաքննվող անձը ոչ պիտանի է ճանաչվում զինվորական ծառայության համար, ախտորոշումը ձևակերպվում է բուժման կուրսի ավարտից հետո՝ ախտաբանական պրոցեսի արդյունքում օրգան-համակարգերի գործառույթային վիճակի

կոնկրետ գնահատումով:

Կլինիկական փորձաքննական եզրակացությունը ձևակերպելիս կարևոր նշանակություն ունի փաստաթղթերում շարադրման կառուցվածքը և հաջորդականությունը: Սկզբում նշվում են հիմնական հիվանդությունը և նրա բարդությունները, որոնք սահմանափակում են փորձաքննվողի գինվորական ծառայության պիտանիությունը: Հետո թվարկվում են ուղեկցող հիվանդությունները՝ անկախ նրանից՝ այդ հիվանդությունները սահմանափակում են պիտանիությունը, թե՛ ոչ: Ձինվորական ծառայության հետ հիվանդության կապի մասին եզրակացությունը ձևակերպվում է հիվանդության ախտորոշման հետ միաժամանակ: Ընդ որում՝ նույն փորձաքննվողի դեպքում կարող են լինել այդ բնույթի մի քանի եզրակացություններ:

Կլինիկական փորձաքննական եզրակացությունը փորձաքննվող անձի ամբուլատոր կամ ստացիոնար հետազոտության և ռազմաբժշկական փորձաքննության վերջնական փուլն է:

Հաշվի առնելով ռազմաբժշկական փորձաքննության ոչ միայն բժշկական, այլև սոցիալական և իրավական առանձնահատկությունները՝ առանձնացվում են կլինիկական փորձաքննության եզրակացության հետևյալ դրույթները.

1. Օբյեկտիվություն, որը ենթակա լինի մասշտիբ արդյունավետ եղանակով ստուգման և ապացուցման՝ գիտականորեն հիմնավորված ժամանակակից միջոցների կիրառումով:
2. Հիմնված լինի փորձագետի մասնագիտական կլինիկական մտածողության վրա, որը ձևավորվում է բժշկականից բացի, նաև սոցիալական և իրավական խնդիրների լուծումով:
3. Ձևակերպվում է բժշկական փորձաքննության պահին հիվանդության կանխորոշված ելքի դեպքում և փորձագետի պատկերացմամբ արտահայտվում է հիվանդության կոնկրետ փուլի հետ փոխկապակցված հիվանդության օբյեկտիվ բնույթով:
4. Կլինիկական փորձաքննական եզրակացությունը ձևակերպվում է որոշակի հաջորդականությամբ, որն ուղղորդում է փորձագետին՝ լուծելու ներկայացված բոլոր խնդիրները:

Առողջությունը և հիվանդությունը տարբեր որակական վիճակներ են, և նրանց միջև սահմանը հարաբերական է: Հիվանդության կլինիկական պատկերը բնորոշվում է օրգանիզմի օրգանների և հյուսվածքների կենսագործունեության խանգարման առանձնահատկություններով և կարգավորող համակարգերի ազդեցությամբ: Այդ որակական առանձնահատկություններն արտահայտվում են հիվանդության ախտանիշներով և համախտանիշներով: Հիվանդությունն ընթանում է բջիջների, օրգանների, համակարգերի և ընդհանուր օրգանիզմի վնասումով: Ընդ որում՝ բուժող բժշկի համար տեսանելի է հիվանդության միայն մի մասը: Սրա պատճառը հոմեոստազի հզոր համակարգն է, որը տևական ժամանակ կարողանում է հավասարակշռել կառուցվածքային փոփոխությունները՝ ապահովելով բավարար ինքնազգացողություն հիվանդության սկզբում և իրականացված բուժման վերջում: Օրգանիզմի հարմարվողականությունն արտաքին միջավայրի և աշխատանքային գործունեության նոր պայմաններում իրականացվում է օրգանիզմի գործառույթային պահուստի հաշվին: Ընդ որում՝ եթե վնասող գործոններն աննշան են, իսկ ազդեցությունը՝ կարճատև, ապա օրգանիզմը կարողանում է ապահովել օրգանիզմի կենսագործունեության և աշխատանքային պայմանների նկատմամբ բավարար հարմարվողականություն: Առավել ուժեղ կամ երկարատև ազդող գործոնների ազդեցությունը հանգեցնում է կարգավորող համակարգերի արտահայտված լարվածության, որն էլ հանգեցնում է օրգանիզմի պաշտպանողական ուժերի հյուծման և գործառույթային հնարավորությունների նվազման: Այս դեպքում արտահայտվում են հիվանդության կլինիկական պատկերը բնորոշող ախտանիշները: Հիվանդության այս շրջանում օրգան-համակարգերի գործառույթային խան-

գարումներն արտահայտվում են հանգստի կամ աննշան ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում, առաջանում են աշխատունակության խանգարումներ, անձի հասարակական ակտիվության նվազում: Առողջացման ընթացքում աստիճանաբար կատարվում է օրգանիզմի առանձին օրգան-համակարգերի գործառույթների վերակառուցում՝ պայմանավորված հարմարվողականության մեխանիզմների լարվածությամբ: Աստիճանաբար հիվանդության կլինիկական պատկերը բնորոշող արտաքին նշաններն անցնում են, որին հաջորդում է կառուցվածքային ձևափոխությունների և գործառույթային խանգարումների հետաճը: Այս փուլում զինծառայողները զինվորական պարտականություններից ազատման կամ վերականգնողական արձակուրդի կարիք ունեն: Առողջացման գործընթացին զուգընթաց առաջանում է հարմարվողականության բավարար վիճակ, օրգանիզմի օրգան-համակարգերի գործունեությունը նորմալանում է, որը հնարավորություն է տալիս անձին դրսևորելու բավարար հասարակական ակտիվություն և աշխատունակություն, եթե նույնիսկ տարած հիվանդությունից կամ խեղումից հետո որոշակի կառուցվածքային փոփոխություններ դեռևս պահպանված են: Այս շրջանում անձը կարող է համարվել գործնականում առողջ և ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ զինվորական ծառայության համար ճանաչվել պիտանի: Եթե հիվանդությունից կամ խեղումից հետո, չնայած հարմարվողական մեխանիզմների լարվածությանը, առաջանում է կենսագործունեության և աշխատունակության կայուն նվազում, ապա դա հանգեցնում է հաշմանդամության, իսկ զինվորական ծառայության տեսանկյունից՝ ոչ պիտանիության:

«Հիվանդ» հասկացողությունը անբաժանելի է «հիվանդություն» և «առողջություն» հասկացողություններից, և հաճախ մարդկանց բաժանումը բացարձակ առողջների և հիվանդների հարաբերական է: Հիվանդ անձը կարող է այնքան հարմարվել աշխատանքային, կենցաղային, կլինայական պայմաններին, որ հաճախ հնարավոր չէ նրան տարբերել առողջից: Քանի որ զինվորական պարտականությունների կատարման ունակությունը աշխատանքային գործունեության հատուկ տեսակ է, ապա «աշխատունակություն» հասկացողությունը կիրառելի է նաև զինվորական ծառայության դեպքում: Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ունակությունը կարելի է ձևակերպել որպես «անձի օրգանիզմի վիճակ, երբ նրա ֆիզիկական և հոգևոր կարողությունների միասնությունը հնարավորություն է տալիս կատարելու զինվորական պարտականություններ: Իսաղաղ և պատերազմի ժամանակ այդ հասկացողությունը նշանակում է «մարտունակություն»: Զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ կարելի է տալ տարբեր մեկնաբանություններ, բայց հիմքում միշտ դրվում է մարտունակության և աշխատունակության գաղափարը: Զինվորական ծառայության պարտականությունների կատարումը չպիտի վնասի առողջությանը և լինի արդյունավետ:

Ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությունը զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ պայմանավորված է առաջին հերթին անձի գործառույթի խանգարման աստիճանով, որը կարող է ազդեցություն ունենալ զինվորական ծառայության պարտականությունների կատարման վրա: Մարդու ֆիզիոլոգիայի տեսանկյունից օրգանիզմի օրգան-համակարգերի գործառույթը օրգանիզմի հարմարվողականությունն է: Ընդ որում՝ կենդանի օրգանիզմի հիմնական գործառույթներն են՝ աճը, բազմացումը, զարգացումը, շնչառությունը, կենսագործունեության արգասիքների ներզատումը և արտազատումը, շարժումը, արտաքին միջավայրի փոփոխությունների նկատմամբ հակազդումը և այլն: 1976թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանվեց հիվանդության հետևանքների փորձարարական կոնցեպտը. «Գործառույթային խանգարում նշանակում է հիվանդություն-խանգարում-աշխատունակության նվազում- սոցիալական թերարժեքություն»:

Ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ գործառույթային խանգարումը՝ փորձաքննվողի օրգանիզմի օրգան-համակարգերի գործունեության խանգարումն է, որը բացահայտվում է օբյեկտիվ եղանակներով և սահմանափակում է զինվորական ծառայության ժամանակ նրա հարմարվողականությունը: Աշխատանքում կամ կենցաղում ֆիզիկական ծանրաբեռնվածության, եղանակային և շրջապատող միջավայրի այլ գործոնների ազդեցության հետևանքով գործառույթային խանգարումների աստիճանը բնորոշվում է հարմարվողականության մեխանիզմների վիճակով:

Ավանդաբար ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ գործառույթի խանգարումների արտահայտվածությունը լինում է երեք աստիճանի՝

I աստիճան. աննշան խանգարում, որն օբյեկտիվ եղանակով հայտնաբերված հարմարվողական մեխանիզմների լարվածության վիճակն է, որը գերազանցում է կոնկրետ անձի սովորական առօրյա ծանրաբեռնվածության մակարդակը: Այս դեպքում զինվորական ծառայության պարտականություններ կատարելու ունակությունը պահպանված է կամ աննշան սահմանափակ է:

II աստիճան. չափավոր խանգարում, որը հարմարվողական մեխանիզմների խափանումն է, և դրսևորվում է կոնկրետ անձի ամենօրյա սովորական ծարաբեռնվածության ժամանակ: Այս դեպքում զինվորական ծառայության պարտականություններ կատարելը խիստ սահմանափակ է:

III աստիճան. զգալի կամ խիստ արտահայտված խանգարում, որը հարմարվողական մեխանիզմների լրիվ խափանումն է, որն էլ դրսևորվում է կոնկրետ անձի դեպքում արդեն հանգստի պայմաններում՝ առանց ծարաբեռնվածության: Չինվորական ծառայության պարտականությունների կատարման ունակություններն այս դեպքում կայուն բացակայում են:

Շեղանաբար, ռազմաբժշկական փորձաքննության հիմնական խնդրի՝ փորձաքննվողի զինվորական ծառայության պիտանիության աստիճանի որոշման ժամանակ հայտնաբերվում է փորձաքննական եզրակացության ուղղակի կախվածությունն ոչ այնքան հիվանդության նոզոլոգիական ձևից, որքան զինվորական ծառայության կոնկրետ պայմաններին օրգանիզմի հարմարվողականության ֆիզիոլոգիական ունակությունների կանխորոշումից:

## Գրականության ցանկ

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք (04.03.1996թ., ՀՕ-42):
2. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N405-Ն որոշում:
3. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշում:
4. «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (15.11.2017թ., N ՀՕ-195-Ն):
5. Основы военно-врачебной экспертизы / А.М. Адаменко, Б.С. Ермиличев, А.П. Кабалин и др./ Под общ. ред. В.В. Куликова. — М.: «Прогрессивные биомедицинские технологии», 2001. — 262 с.
6. Սահակյան Ս.Ս. Չորակոչիկների հենաշարժիչ համակարգի հիվանդությունների հիմնախնդիրները և նրանց ռազմաբժշկական փորձաքննությունը ՀՀ-ում, Ատենախոսություն, Երևան, 2018թ:
7. Тимофеев, д.А. Физиологические аспекты первичной специализации военных врачей на послеузовском этапе обучения: Автореф. дис. докт. мед. наук/Д.А.Тимофеев. Саратов, 2002. — 38 с.
8. Ядчук, В.Н. Концепция управления качеством медицинского обеспечения подготовки граждан к военной службе / В.Н. Ядчук. — Москва: Военное издательство МО РФ, 2004. 192 с.
9. Давыдов, В.М. Методология оценки функционирования и оптимизации системы военно-медицинского образования в современных условиях: Автореф. дис. ... д-ра. мед. наук. Москва: 2006. 43 с.

## НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ВОЕННО-МЕДИЦИНСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

**Галстян С.Г., Чарчян А.Г., Саакян С.С., Мартиросян Т.Р.,  
Матосян С.Г.**

*В статье представлен ряд актуальных подходов к методике проведения военно-медицинской экспертизы. Перечислены требования к выдаче заключения клинической экспертизы, а также приведен регламент проведения военно-медицинской экспертизы.*

*В данной статье предпринята попытка проанализировать классификацию степеней функциональных нарушений, по которым проводится военно-медицинская экспертиза.*

**Ключевые слова:** *военно-медицинская экспертиза, заключение клинической экспертизы, функциональные нарушения, экспертный прогноз, критерии пригодности к военной службе.*

## SOME ASPECTS OF MILITARY MEDICAL EXPERTISE

**Galstyan S., Charchyan A., Sahakyna S.,  
Martirosyan T., Mathosyan S.**

*The article presents the current approaches of methodology and perspectives of the military medical expertise. The requirements for making a clinical expert conclusion, as well as legislative regulations of military medical expertise are presented in the article.*

*The classification of degrees of functional disorders which guides the process of military medical expertise is analyzed in the article.*

**Key words.** *military medical expertise, clinical expertise conclusion, functional disorder, forensic forecast, criteria of military service suitability.*

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ  
ՀՀ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
(ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

**Ենգիրարյան Վ. Գ.**

Երևանի պետական համալսարան,  
Երևան, Հայաստան

Հոդվածում քննարկվում է դատափորձագիտության և քրեագիտության տեսության կարևորագույն խնդիրներից մեկը՝ դատափորձաքննության ինստիտուտի քրեական դատավարության կարգավորումը, համեմատական վերլուծություն անցկացնելով գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի դրույթների միջև: Հոդվածը ներկայացնում է իրավասու անձ-փորձագետի իրավական կարգավիճակի, նրա լիազորությունների, ինչպես նաև փորձաքննության անցկացման դերի և հիմքերի վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումներ: Արդյունքում առկա իրավական բացերը բացահայտվել են ինչպես գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում:

Նշվում է, որ բացահայտված խնդիրներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Դրանք առավել կարևորվում են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավական կարգավորման շրջանակներում, երբ քննությունները ներկայացվում են առանձին գլխում՝ որպես առանձին դատավարական (ապացուցողական) գործողություն, ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքի, որում փորձաքննության նշանակումը և անցկացումը կարգավորվում է որպես առանձին քննչական գործողություն:

**Բանալի բառեր.** դատական փորձաքննություն, հատուկ գիտելիքներ, քրեական դատավարության օրենսգիրք, օրենսդրական փոփոխություններ, փորձագետ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդի փուլում մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը, ի տարբերություն գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) հայեցակարգային փոփոխություններ է նախատեսել փորձաքննությունների իրավակարգավորումներում:

Նախ և առաջ, Նախագիծը, կարևորելով փորձաքննության քրեադատավարական ինստիտուտի դերն ու նշանակությունը, արդարացիորեն դրա նշանակումն ու կատարումը, ի տարբերություն գործող Օրենսգրքի, չի նախատեսում որպես առանձին քննչական գործողություն, այլ այն սահմանել է որպես քրեական դատավարության առանձին ինստիտուտ՝ ապացուցողական գործողությունների շարքում:

Որպես ապացուցողական առանձին գործողություն՝ Նախագծով փորձաքննությունների իրականացման հարցերը կարգավորված են Գլուխ 32-ով, որը վերնագրված է «Փորձաքննությունը»:

Այնուհետև, համաձայն Օրենսգրքի 243-րդ հոդվածի՝ փորձաքննությունը կատարվում է հե-

*Թղթակցական հասցեն՝ Ենգիրարյան Վահե Գուրգենի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան; 0025 Ալեք Մանուկյան 1, Երևան, Հայաստանի Հանրապետություն:*

տաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետի, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից:

Իսկ Նախագծի 259-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»:

Ինչպես նկատում ենք, Նախագիծն ընդլայնել կամ առավել ևս՝ չի սահմանափակել փորձաքննություն նշանակելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների շրջանակը՝ սահմանելով «..... կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ» ձևակերպումը, որը, մեր կարծիքով, միանգամայն տեղին է՝ նկատի ունենալով արդի ժամանակաշրջանի գիտական ու տեխնոլոգիական առաջընթացի աննախադեպ տեմպերը և դրանց կիրառումը փորձագիտական հետազոտությունների ընթացքում:

Հարկ է նշել, որ եվրոպական որոշ երկրների քրեադատավարական օրենսդրությամբ նույնպես նշվում են հատուկ գիտելիքների այն բնագավառները, որոնց գիտական տվյալները կարող են օգտագործվել դատափորձագիտական գործունեության մեջ: Օրինակ, Գերմանիայի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձը, ով նշանակված է որպես փորձագետ, պետք է համապատասխանի իր կոչմանը, եթե նա պետականորեն (իրապարակայնորեն) նշանակված է պահանջվող տեսակի կարծիք (եզրակացություն) տալու համար, կամ եթե նա պետական կամ մասնավոր մակարդակով կիրառում է գիտությունը, արվեստը կամ առևտուրը, որոնց բնագավառի գիտելիքները նախադրյալ են հանդիսանում կարծիք (եզրակացություն) տալու համար, կամ եթե նա պետականորեն նշանակվել կամ ճանաչվել է այդ մասնագիտությունը կիրառելու համար»:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով տեխնիկական հարցեր ծագելու դեպքում հետաքննություն կամ դատաքննություն իրականացնող ցանկացած դատարան պետական մեղադրողի կամ սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ իրավունք ունի դիմելու փորձագետին՝ եզրակացություն ստանալու համար: Պետական մեղադրողը կամ կողմը, որը միջնորդում է այդպիսի փորձագիտական եզրակացություն ստանալու համար, կարող է նշել այն հարցերը, որոնք նա անհրաժեշտ է գտնում, որպեսզի դրանք առաջադրվեն փորձագետին»:

Շվեյցարիայի Համադաշնության քրեական դատավարության օրենսգրքում հատուկ գիտելիքների կամ դրանց պատկանելության ոլորտի մասին ընդհանրապես խոսք չկա: Մասնավորապես, Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե փորձագետը կարող է իր հետևություններով կամ եզրակացությամբ օգնել գործի հանգամանքների պարզաբանմանը, դատավորը կարող է նշանակել փորձաքննություն»:

ԱՄՆ ապացուցման իրավունքում «հատուկ գիտելիքների» վերաբերյալ դրույթները, որոնք արտացոլում են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության չափանիշները, իրենց ամրագրումն են գտել ԱՄՆ Դատական ապացույցների դաշնային կանոններում: Պատմականորեն փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովման



վերաբերյալ հիմնական դրույթն Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաստատվեց 1923 թվականին՝ Ֆրիեն ընդդեմ Միացյալ Նահանգների գործով: ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից այդ գործով հաստատված կանոնի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կարող է ապացույցի ուժ ունենալ, եթե կիրառված փորձագիտական մեթոդն ընդունելի է համապատասխան գիտական համայնքի կողմից [1]:

1993թ. ԱՄՆ Գերագույն դատարանն ընդունեց դատական ապացույցների հիմնավորվածության վերաբերյալ նոր չափանիշներ, որոնք հայտնի են «Դուբերյան կրիտերիաներ» անվանումով [2]: Այդ չափանիշներն, ըստ էության, դատավարությանը փորձագետի եզրակացության թույլատրելիությունը կանխորոշող չափանիշներ են [3]:

«Դուբերյան կրիտերիաների» համաձայն՝

ա) փորձագետը պետք է ունենա բավարար հատուկ գիտելիքներ, հմտություններ և փորձ համապատասխան բնագավառում,

բ) փորձաքննական մեթոդը պետք է ստուգվի կամ ստուգելի լինի փորձով,

գ) մեթոդը պետք է ենթարկված լինի փորձագիտական գնահատականի և հրապարակման,

դ) փորձագետը պետք է կարողանա որոշել հնարավոր սխալների հավանականության աստիճանը,

ե) մեթոդը պետք է ի վիճակի լինի բացատրել երևույթները բավարար պարզությամբ և հստակությամբ՝ այնպես, որ դատարանին հասկանալի լինի դրա լրիվ նշանակությունը [4]:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության առնչությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի կողմից 1975թ. հրապարակված և 2000թ. փոփոխված Դատական ապացույցների դաշնային կանոնների 7-րդ հոդվածի 702-րդ կանոնի («Փորձագետի եզրակացությունը») համաձայն՝ «Եթե գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքները կօգնեն փաստերը որոշող անձին (երդվյալ ատենակալներին՝ հ.խ.) ապացույցները հասկանալու և վիճելի փաստերը որոշելու համար, իր գիտելիքների, հմտությունների, փորձի, ուսուցման կամ կրթության ուժով որպես փորձագետ որակավորված վկան կարող է այդ մասին վկայություն տալ եզրակացության կամ այլ ձևով, եթե՝

ա) վկայությունը հիմնված է բավարար փաստերի կամ տվյալների վրա,

բ) վկայությունը վստահելի սկզբունքների և մեթոդների արդյունք է,

գ) սկզբունքներն ու մեթոդները ճշգրիտ կերպով կիրառվել են գործի փաստերի նկատմամբ» [5]:

Ի դեպ, հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտների սպառիչ թվարկումն արդարացի չէ, ինչի հետ կապված հատկապես ողջունելի է ԱՄՆ-ի փորձը, որը Դատական ապացույցների դաշնային կանոնների 702-րդ կանոնում չի սահմանափակում այն հնարավոր բնագավառները, որոնց կարող են պատկանել գործի քննության ընթացքում կիրառման ենթակա հատուկ գիտելիքները: Այսպիսի մոտեցումը, անկասկած, առավել արդարացի է թվում: Բանն այն է, որ քրեադատավարական հարաբերություններում կարող է անհրաժեշտություն առաջանալ գործի որոշակի հանգամանքների բացահայտման համար կիրառել այնպիսի գիտելիքներ, որոնք չպատկանեն գիտության, տեխնիկայի, արհեստի կամ արվեստի ոլորտին, սակայն, որպես այդպիսին՝ հանդիսանան հատուկ գիտելիքներ՝ իրենց ոչ հանրամատչելիության և տվյալ մասնագիտությանը, որակավորմանը, փորձին կամ հմտություններին որոշակի անձի կողմից տիրապետելու ուժով, և ենթակա լինեն կիրառման կոնկրետ գործով: Ավելին, հատուկ գիտելիքների բնագավառների սպառիչ թվարկումը կարող է արգելք հանդիսանալ դատական պրակտիկայում այդ բնագավառներից դուրս այլ հատուկ

գիտելիքների կիրառման համար, ինչն արդարացի է: Ուստի, կարծում ենք, դատական փորձաքննությունների նշանակման հնարավորությունների ընդլայնման և դրանով իսկ քրեական գործերի արդյունավետ քննության և լուծման համար անհրաժեշտ է վերացնել հատուկ գիտելիքների պատկանելության հնարավոր ոլորտների սպառիչ թվարկումը և համապատասխան բնագավառները թվարկող դրույթներում (մասնավորապես՝ Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մաս, 85-րդ հոդվածի 1-ին մաս) դրանք շարադրել ոչ սպառիչ ցանկով:

Նման իրավական կարգավորումը հատկապես կարևոր նշանակություն կարող է ունենալ քրեական գործերով միջազգային իրավական օգնության գործընթացներում՝ հաշվի առնելով կիրառման ենթակա հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտների վերաբերյալ պետությունների օրենսդրության տարբերությունները: Քննարկվող ոլորտների ոչ սպառիչ բնույթը կարող է խթան հանդիսանալ քրեական գործերով միջազգային համագործակցության առավել արդյունավետ կազմակերպման համար՝ առանց հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտի սահմանափակումների պետությունների դատափորձագիտական, արդարադատության և իրավապահ մարմինների կողմից միմյանց դիմելու հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը որոշվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, բացի փորձաքննություն նշանակելու պարտադիր դեպքերից, որոնք նախատեսված են Օրենսգրքի 108-րդ հոդվածով: Վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ փորձաքննություն նշանակելու մասին, պետք է հիմնված լինի հետևյալ օբյեկտիվ նախադրյալների վրա.

- իրավական նախադրյալ (համապատասխան նյութաիրավական նորմի առկայություն),
- հատուկ նախադրյալ (փորձագիտական գիտելիքների համապատասխան մակարդակի առկայություն, որը հնարավորություն է տալիս որոշելու փորձաքննության առարկան),
- տրամաբանական նախադրյալ (փորձաքննության առարկայի և քննարկվող իրավաբանական փաստի միջև հնարավոր կապի առկայություն):

Նշված նախադրյալները որոշ հեղինակների կարծիքով համարվում են նաև չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս կոնկրետ իրավիճակներում տարանջատել առօրեական, հանրամատչելի և հատուկ գիտելիքները [6]:

Այսպիսով, հատուկ գիտելիքների վերաբերյալ վերը շարադրված տեսական մոտեցումների և օրենսդրական դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ՝ «հատուկ գիտելիքները» գիտության, տեխնիկայի, արհեստի, արվեստի, առևտրի կամ ցանկացած այլ բնագավառի վերաբերյալ գիտական տվյալներն են, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտելու գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնք չեն կարող բացահայտվել առանց համապատասխան մասնագիտություն, որակավորում և փորձ ունեցող մասնագետի ներգրավվածության և վերջինիս կողմից համապատասխան գիտելիքների կիրառման: Հատուկ գիտելիքները՝ որպես դատավարական կատեգորիա, պետք է համապատասխանեն ոչ միայն հատուկ նախապայմաններին, այլ նաև քրեադատավարական ձևին և առանձնացված լինեն դատավարական գործունեության այլ ձևերից, այսինքն՝ հատուկ գիտելիքները պետք է կիրառվեն դատավարական կարգով և համապատասխան նորմերով սահմանված պահանջներին համապատասխան: Ընդ որում, գիտական տվյալների պատկանելության ոլորտն էական նշանակություն չունի դատավարությունում՝ մասնավորապես, քրեական, հատուկ գիտելիքների բնորոշման համար: Կարևորն այդ գիտելիքների կիրառման նպատակն է, այն է՝ դրանց կիրառմամբ բացահայտել գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնք այլ քննչական գործողություններով կամ այլ կերպ չեն կարող բացահայտվել:

Քրեական գործ հարուցելու հարցի լուծման, ինչպես նաև քննության հետագա փուլերի համար նմուշների ստացման կարևոր նշանակությամբ է, թերևս, պայմանավորված Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետում և 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում կատարված փոփոխությունները, համաձայն որի՝ քննիչին և հետաքննության մարմնին իրավունք վերապահվեց մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով նաև հետազոտման համար վերցնել նմուշներ:

Այս տեսանկյունից հատկանշական են Նախագծի իրավակարգավորումները, որոնք որոշակիորեն տարբերվում են նմուշներ ստանալու վերաբերյալ գործող Օրենսգրքի իրավակարգավորումներից: Մասնավորապես, Նախագծի 254-րդ հոդվածով կարգավորվում է փորձաքննության համար նմուշներ ստանալու կարգը, տեսակները, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հետազոտման համար նմուշներ ստանալը համարում է առանձին քննչական գործողություն, որին նվիրված է առանձին գլուխ (Գլուխ 36):

Սակայն, Նախագիծը հետազոտման համար նմուշների ստացումն առանձին քննչական գործողություն չնախատեսելով՝ չի բացառում դրանց ստացման հնարավորությունը քննչական գործողության ընթացքում՝ միաժամանակ ամրագրելով, որ նշված կանոնը չի վերաբերում մարդուց ստացվող նմուշներին:

Համաձայն Նախագծի 254-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև փորձաքննություն նշանակելը կամ դրա կատարման ընթացքում քննիչը կամ նրա հանձնարարությամբ փորձագետը, սույն օրենսգրքի 28-րդ գլխի վերաբերելի պահանջների պահպանմամբ, իրավասու է վերցնել մարդու, դիակի, կենդանու, նյութի կամ այլ օբյեկտի հատկությունները բնութագրող նմուշներ, եթե դրանք անհրաժեշտ են փորձաքննության կատարման համար:

Անշուշտ, ի տարբերություն գործող Օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի ձևերայման, Նախագծի վերոնշյալ իրավանորմն առավել ամբողջական ու համակարգված բնույթ է կրում, սակայն կարծում ենք, որ որոշակի ճշգրտումների կարիք, այնուամենայնիվ, առկա է: Մասնավորապես, Նախագծի 28-րդ գլուխը, որին հղում է կատարվում Նախագծի նշված ձևակերպման մեջ, սահմանում է քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները: Պարզ է, որ խոսքը վերաբերում է ընցակարգային իրավակարգավորումներին, սակայն, կարծում ենք, նպատակահարմար կլիներ, որպեսզի նույն իրավանորմը սահմաներ նաև, որ քննիչի հանձնարարությամբ փորձագետի կողմից նմուշներ վերցնելու պարագայում վերաբերելի պահանջները (կամ այլ կերպ՝ ընթացակարգային համապատասխան կանոնները) նախատեսվում են քննիչի հանձնարարության մեջ, այլ ոչ թե՝ դրանց ընտրությունը թողնել փորձագետի հայեցողությանը՝ նկատի ունենալով հարցի իրավական բնույթը: Առաջարկվող իրավակարգավորումը հնարավորություն կընձեռի խուսափելու քրեական վարույթի հետագա ընթացքում հնարավոր տարըմբռնումներից ու շահարկումներից:

Ընդ որում, թեև Նախագծի վերոնշյալ հոդվածի ձևակերպումից հետևում է, որ քննիչն ինքնուրույն իրավասու է վերցնել նմուշներ, այդուհանդերձ, նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ նմուշի ստացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները քննիչը կատարում է համապատասխան բնագավառի ձեռնհաս փորձագետի մասնակցությամբ:

Հատկանշական է նաև, որ Նախագծի 254-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նմուշների տեսակները, համաձայն որի՝ նմուշ կարող են լինել արյունը, սերմնահեղուկը, մազը, եղունգների կտրվածքները, մաշկի մանրադիտակային քերվածքները, թուփը, քրտինքը և այլ արտաթորանքները, մաշկի գծանախշերի դրոշմը, ատամների և վերջավորությունների կաղապարները, ձեռագիրը, ստորագրությունը, մարդու հմտությունն արտահայտող այլ նյութերը, ձայնագրությու-

յունը, պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի փորձնական նմուշները, զենքը, պարկուճը, գնդակը, փամփուշտը, այլ նյութեր և առարկաներ:

Ընդ որում, հարկ է նշել, որ «համեմատական հետազոտման նմուշ» հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տարբեր տեսակետներ կան: Իհարկե, յուրաքանչյուր հրատարակված սահմանում պարունակում է համեմատական հետազոտման նմուշի հասկացության ճիշտ ընկալման համար հիմնական բնութագրումներ [7-11]: Թերևս, ոչ բոլոր առաջարկված սահմանումներին կարելի է համաձայնել:

Համեմատական հետազոտման նմուշ ասելով՝ հասկացվում է. «...նյութական օբյեկտ, որն անկասկած սերում է այլ օբյեկտից և հանդիսանում է նրա մասը կամ արտացոլում է նրա հատկությունները, որն ստացվում է հատուկ հետազոտությունների կատարման համար, ճանաչվող օբյեկտի սեռային (խմբային) պատկանելության վերականգնման և ինքնության ճանաչման նպատակով, ինչպես նաև քննվող հանցագործության այլ հանգամանքների վերականգնման համար» [12]:

Մեկ այլ սահմանման համաձայն. «Նմուշներն առարկաներ են, որոնք ստեղծվել կամ փոփոխվել են իրեղեն ապացույցների ձևավորման եղանակին նման ձևով և հենց այդ օբյեկտի ազդեցության ներքո» [13]:

Գրեթե բոլոր սահմանումներում տրված է նմուշի գլխավոր ատրիբուտը՝ համեմատական հետազոտության համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը նմուշում: Անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են, թե ստացվել են այլ օբյեկտից, նմուշը պետք է իր մեջ պարունակի համեմատության համար բավարար և օգտակար տվյալներ՝ իդենտիֆիկացիայի խնդիրների իրականացման համար:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ անկախ համեմատական հետազոտման նմուշի տարաբնույթ սահմանումներից, համեմատական հետազոտման նմուշը նյութական առարկա, օբյեկտ է, որն ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով պիտանի է համեմատական հետազոտում իրականացնելու համար [14]:

Ուշագրավ է նաև, որ Նախագծում չի օգտագործվում մասնագետ եզրույթը, չնայած՝ 59-րդ հոդվածում նախատեսված է փորձագետի՝ ապացուցողական կամ վարույթային այլ գործողության կատարմանը մասնակցելու հնարավորությունը: Այսինքն՝ Նախագիծը, ի տարբերություն գործող Օրենսգրքի, առավել ընդլայնել է փորձագետ հասկացությունը՝ դրա մեջ ներառելով նաև գործող Օրենսգրքով նախատեսված մասնագետ հասկացության ատրիբուտները:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է վերլուծել վերոգրյալ հոդվածի իրավակարգավորումներն իրավապահ և փորձագիտական պրակտիկայի ներդաշնակեցման ու հետագա թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Այսպես, գործող Օրենսգրքի 84-րդ հոդվածը սահմանում է.

1. *Մասնագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում իր մասնագիտական հմտությունները և գիտելիքներն օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս: Մասնագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից:*

2. *Մասնագետը պետք է տիրապետի բավարար մասնագիտական հմտությունների և գիտելիքների:*

3. *Քրեական գործով վարույթում իրավաբանական հարցերով մասնագետ չի ներգրավվում:*

Մասնագետի հայտնած կարծիքը չի փոխարինում փորձագետի եզրակացությանը:

Օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է.

Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն փալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից:

2. Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Օրենսգրքի վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել երկու հիմնական հատկանիշ, որոնք առանցքային նշանակություն ունեն մասնագետի և փորձագետի քրեադատավարական կարգավիճակի հստակեցման համար.

Ի տարբերություն, փորձագետի, ով պետք է տիրապետի թվարկված որևէ բնագավառում բավարար հատուկ գիտելիքների, մասնագետը պետք է տիրապետի բավարար մասնագիտական հմտությունների և գիտելիքների:

Փորձագետը քրեական գործով վարույթին ներգրավվում է գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար, մինչդեռ մասնագետը ներգրավվում է քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս աջակցություն ցուցաբերելու համար:

Ավելին՝ մասնագետի հայտնած կարծիքը չի փոխարինում փորձագետի եզրակացությանը, ինչը նշանակում է, որ, ի տարբերություն փորձագետի, մասնագետն իր անմիջական գործունեության արդյունքում քրեադատավարական ապացույցի ինքնուրույն տեսակ՝ եզրակացություն, չի ստեղծում:

Փորձագետի և մասնագետի քրեադատավարական կարգավիճակի առանձնահատկություններին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ Արտեմ Հարությունյանի վերաբերյալ գործով 2016 թ. նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշման մեջ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը.

«... Մեջբերված նորմերի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետի եզրակացությունը քրեական դատավարության օրենսդրությամբ հստակ կանոնակարգված գործողության արդյունք է: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ գլուխը մանրամասն կարգավորում է փորձաքննության նշանակման և կատարման հետ կապված հարցերը: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննությունը կատարվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա, որտեղ, ի թիվս այլ հանգամանքների, պետք է շարադրվեն նաև փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները, այլ օբյեկտները, փորձագետին առաջադրված հարցերը և անհրաժեշտ այլ տեղեկությունները: Համապատասխան 13 նյութերի հետազոտության արդյունքում փորձագետը կազմում է գրավոր եզրակացություն, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն, ապացույցի ինքնուրույն տեսակ է: Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:

Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և

եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից փորձվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդարարական նշանակություն» [15]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Նախագծի 59-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Փորձագետը վարույթի առարկայով չհասագրգռված այն անձն է, ով հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, օժանդակում է վարույթին՝

1) հետազոտություն իրականացնելով և դրա հիման վրա գրավոր եզրակացություն տալով.

2) առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալով.

3) ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմանը մասնակցելով»:

Բացի դրանից, Նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետը պարտավոր է ձեռնպահ մնալ առաջադրված հարցերին պատասխանելուց, եթե դրանք դուրս են իր հատուկ գիտելիքների կամ հմտությունների շրջանակից:

Նշված իրավանորմերի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձագետ հանդիսանալու համար անձը պետք է տիրապետի կամ 259-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուկ գիտելիքների կամ էլ՝ հմտությունների:

Կասկածից վեր է հատուկ գիտելիքի և հմտության սահմանումների բովանդակային տարբերությունները, որոնց էությանն ու բովանդակությանն անդրադարձել ենք տարբեր աշխատություններում [16-18]: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ իմացաբանական տեսությունում «հատուկ [19] գիտելիքներ», «հատուկ գիտական գիտելիքներ» բառակապակցություններ գոյություն չունեն, դրանք բնորոշ են միայն իրավական ոլորտին: Իրավաբանական ռուսալեզու գրականությունում «знания» (գիտելիք)<sup>1</sup> եզրույթի փոխարեն հավասարապես օգտագործվում է նաև «познания» (իմացություն)<sup>2</sup> եզրույթը: Մասնավորապես՝ Վ.Կ. Լիսիչենկոյի և Վ.Վ. Յիրկալի կարծիքով՝ «հատուկ գիտելիքներ» և «հատուկ իմացություն» եզրույթները միարժեք են և վկայում են փորձագետի մասնագիտական գիտելիքների բազմազանության մասին [20]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ թե՛ բնույթի, և թե՛ բովանդակության տեսանկյունից «հատուկ գիտելիք» հասկացությունն առավել տարողունակ և բազմաշերտ է, քան «հմտություն» հասկացությունը, որն առավելապես բնութագրում է գործնական հատկանիշներ, փորձի առկայություն, ինչն էլ ենթադրում է տվյալ պարագայում առանց հատուկ՝ առավել ձեռնհաս ու խորը գիտելիքների, անձին զուտ փորձի ու գործնական կարողությունների, (այլ կերպ նաև՝ մասնագիտական) հատկանիշների տիրապետման փաստի ուժով ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմանը ներգրավելու հնարավորություն:

Հատուկ գիտելիքների և հմտությունների փոխհարաբերակցության տեսանկյունից՝ ապագայում միանգամայն հնարավոր է գործող իրավակարգավորումներով նախատեսված մասնագետի չափանիշներին համապատասխանելու պայմաններում անձին ներգրավել քրեական գործով

<sup>1</sup> Գիտելիք - մարդու՝ որևէ բնագավառի վերաբերյալ իմացածների՝ գիտեցածների ամբողջությունը, տես վերը նշված աշխատությունը, էջ 240:

<sup>2</sup> Իմացություն - 1. իմանալը, 2. իմացական կարողություն, 3. կեցության արտացոլումը մտածողության մեջ, օբյեկտիվ աշխարհի ճանաչողությունը, տես վերը նշված աշխատությունը, էջ 488:

վարույթին՝ դրանով իսկ վերացնելով տարբեր տեսաբան ու պրակտիկ իրավաբանների մոտ ներկայումս գերիշխող մտահոգությունն առ այն, որ Նախագծի դրույթներին համապատասխան վարույթին կարող է ներգրավվել միայն ներկայիս իրավակարգավորումներով փորձագետի կարգավիճակին համապատասխանող անձը:

Ավելացնենք նաև, որ հատուկ գիտելիքներ եզրույթի հետ սերտորեն կապված է նաև «հմտություններ» հասկացությունը, որը պայմանավորված է փորձաքննությունների կատարման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների կիրառական նշանակությամբ: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ հատուկ գիտելիքների կիրառումը (inter alia) փորձագետից պահանջում է նաև նշված բնագավառում որոշակի հմտությունների տիրապետում:

Այդուհանդերձ, Նախագծի 59-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների»: Ինչպես նկատում ենք, տվյալ ձևակերպման մեջ բացակայում է «հմտություններ» եզրույթը, ինչն ուղղակիորեն հակասում է նույն հոդվածի առաջին մասի սահմանմանը:

Պետք է ընդգծել, որ նշված ձևակերպումներն անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել, ինչպես օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման, այնպես էլ հետագա հնարավոր տարընթանումներից խուսափելու նպատակով:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն գործող Օրենսգրքի, Նախագիծն ընդլայնել է նաև փորձագետի իրավունքների ու պարտականությունների շրջանակը: Դրանց շարքում առավել հետաքրքրական է փորձագետի իրավասությունները փորձաքննության վերաբերելի նյութերի՝ ելակետային տվյալների որոշակիացման հարցում: Մասնավորապես, Նախագծի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագետն իրավունք ունի եզրակացություն տալու համար վարույթն իրականացնող մարմնից պահանջել *անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր*, եզրակացություն կամ կարծիք տալու համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ *վարույթի վերաբերելի նյութերին* և դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ, մասնակցել վարույթային գործողություններին, *որքանով դրանք վերաբերում են* փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար:

Եվ վերջապես, հարկ է փաստել, որ, ի տարբերություն գործող Օրենսգրքի, Նախագծի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլոց, քրեական վարույթում առանձին ապացույցներ են՝ փորձագետի եզրակացությունը, փորձագետի կարծիքը, փորձագետի ցուցմունքը:

Ամփոփելով՝ պետք է փաստել, որ ընդհանուր առմամբ Նախագծում ամրագրված հայեցակարգային ժամանակակից մոտեցումները, փորձաքննությունների իրավական կարգավորմանը վերաբերող նորմերի լրացումներն ու փոփոխությունները, թերևս, կարելի է համարել որպես առաջընթաց քայլ, որն ապագայում դեռևս կենթարկվի պրակտիկայի քննությունը:

## Գրականության ցանկ

1. Frye v. United States, 293 F. 10 13. (App D.C. 1923):
2. Daubert V. Merrell Dow Pharmaceuticals, INC. The U.S. Supreme Court, No. 92-102. Argued March 30, 1993:
3. Kiely F. Terrence. Forensic Evidence: Science and the Criminal Law. CRC Press, Florida, 2000, p 12-14:
4. Olsson J. Forensic Linguistics: An Introduction to Language, Crime, and the Law, Published by Continuum International Publishing Group, London, 2004, p. 41-42.
5. Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա. Դատական փորձագիտության տեսություն



- (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները /գիտական ձեռնարկ: Խմբ. Վ. Գ. Ենգիբարյան: Երևան: Անտարես, 2012, էջ. 39-66:
6. Сахнова Т.В. Судебные доказательства. Москва, 2000, с. 8.
  7. Дулов А. В., Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, с. 165.
  8. Петрухин И.Л. Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, Москва, 1964, с. 37.
  9. Жбанков В.А. Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования. Минск, 1965, с. 71.
  10. Винберг А.И. Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе//Соц. Законность. 1966. – № 3. – էջ 22;
  11. Грамович Г.И. Тактика использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений, Минск, 1987, с. 32.
  12. Долженко Н.И. Понятие образцов для сравнительного исследования и их природа, Вестник криминалистики, Вып. 1, Москва, 2000, с. 47.
  13. Орлов Ю.К. Гносеологическая сущность и процессуальная форма образцов для сравнительного исследования, Труды ВНИИСЕ, Вып. 5, Москва, 1973, с. 178.
  14. Ենգիբարյան Վ.Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2018, էջ. 601-604:
  15. Արտեմ Հարությունյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ. նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշման 16-րդ և 16.1-րդ կետերը:
  16. Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն.Դատական փորձաքնությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները: Երևան: ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020, էջ. 10-17:
  17. Ենգիբարյան Վ.Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Երևան, «Թասկ ՍՊԸ», 2018, էջ. 589-595:
  18. Ենգիբարյան Վ.Գ., Դավթյան Լ., Չախոյան Ա., Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները /գիտական ձեռնարկ: Խմբ. Վ. Գ. Ենգիբարյան: Երևան: Անտարես, 2012, էջ. 29-37:
  19. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, Ա-2, էջ 840:
  20. Лисиченко В.К., Циркаль В.В., Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987, с. 17:

## ПЕРСПЕКТИВНЫЕ РАЗВИТИЯ ПРАВОВЫХ РЕГУЛИРОВАНИЙ ЭКСПЕРТИЗ В КОНТЕКСТЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

**Енгибарян В.Г.**

*Статья посвящена одной из важнейших задач теории судебной экспертологии и криминалистики – уголовно-процессуальному регулированию института судебной экспертизы. Приведен сравнительный анализ положений действующего УПК РА с положениями проекта нового УПК РА, который находится на стадии обсуждения в Национальном Собрании РА. В статье представлены новые концептуальные подходы правового статуса сведущего лица - эксперта, его полномочия, а также роль и основы проведения экспертизы. Обобщены результаты, которые выявили существующие правовые пробелы, как в действующем УПК РА, так и проекте нового УПК РА.*

*Отмечается, что выявленные вопросы имеют как теоретическую, так практическую*

значимость. Подчеркивается, что в рамках правового регулирования в проекте нового УПК РА экспертизы представлены в отдельной главе в качестве отдельного процессуального (доказательственного) действия, в отличие от действующего УПК, в котором регулируется назначение и проведение экспертизы как отдельное следственное действие.

**Ключевые слова:** судебная экспертиза, специальные знания, уголовно-процессуальный кодекс, законодательные поправки, эксперт.

## PERSPECTIVE DEVELOPMENT OF THE LEGAL REGULATIONS OF EXPERTISE IN THE CONTEXT OF RA CRIMINAL-PROSEDURAL LEGISLATION (LEGAL-COMPARATIVE ANALYSIS)

**Yengibaryan V.**

*The article is referred to the one of the most important issues of a forensic expertology and criminalistics namely criminal procedural regulation of the institution of forensic expertise, comparatively analyzing the provisions of the current Criminal Procedure Code of the RA and the draft of new Criminal Procedure Code of the RA. The article presents new conceptual approaches to the legal status of competent bodies, which are liable to implement judicial expertise, their liability as well as the role and basis of the expertise conduction. As a result legal omissions in the existing Criminal Procedure Code of the RA and the Draft of new Criminal Procedure Code are revealed.*

*It is noted that the issues identified have both theoretical and practical significance. It is emphasized that within the framework of legal regulation of the draft of the new Criminal Procedure Code of the RA expertise is presented in a separate chapter as a separate procedural (evidentiary) action in contrast to the current Criminal Procedure Code, in which the appointment and conduct of an expertise is regulated as a separate investigative action.*

**Key words:** forensic expertise, special knowledge, criminal procedure code, legal amendments, expert.

**ՏՐԱՄԱԴՈԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԵՏԱԶՈՏԵԼԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ  
ԴԱՏԱՆՅՈՒԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱԶ-  
ՔՐՈՄԱՏԱԳՐԱՖԻԱՅԻ ՄԵԹՈԴԻ ՎԱԼԻԴԱՑՈՒՄԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԻՍՕ/ԻԷԿ  
17025:2005 ՍՏԱՆԴԱՐՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ**

**Թովմասյան Ա. Գ.**

*Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան*

Հոդվածը նվիրված է դատական փորձաքննությունների արդյունավետության բարձրացման մոտեցումներից մեկին, մասնավորապես՝ մեթոդական նյութերի վավերացման մեխանիզմների օգտագործմանը, ներառյալ նմուշառումն ու նմուշ պատրաստելը: Ընդգծվում է դիտարկվող մոտեցման կարևորությունն ու գործնական բնույթը, ինչպես նաև նշված փորձաքննությունների իրականացման պարավորությունը՝ համաձայն ISO / IEC 17025: 2017 միջազգային ստանդարտի պահանջների: Նշվում է, որ վերջին երեք տարիների ընթացքում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում մշակվել և դատափորձագիտական պրակտիկայում ներդրվել են թմրամիջոցների համար ակտիվ բաղադրիչի քանակական հաշվարկի և չափման անորոշության գնահատման վավերացված մեթոդներ: Տրամադրվող պարունակող օբյեկտների դատաթունաբանական փորձաքննության օրինակով, փորձարարական հետազոտությունների ընթացքում ստացված պահման ժամանակների օգտագործմամբ, կառուցված տրամաչափման կախվածությունների և պիկային գոյիների հաշվարկված արժեքների մշակմամբ, հաշվարկվել են «k» և «s» գործակիցների արժեքները: Հոդվածում նշվում է նաև, որ մշակված մեթոդը վավերացվել է հետևյալ պարամետրերին՝ համապատասխան՝ «Specificity», «Linearity», «Accuracy», «Repeatability» և «Intermediate precision»:

**Բանալի բառեր.** տրամադրվող, կալիբրավորման կորեր, մեթոդի վալիդացում, թմրանյութեր, գազ-քրոմատագրաֆիա, անորոշություն, գծայնություն, խտություն:

Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցները և հոգեմետ նյութերը մուտք են գործում տարբեր ճանապարհներով, որոնցից տարածված տարբերակ է փոստային առաքման ճանապարհը՝ տարբեր տեսակի իրերի (սննդամթերք, քաղցրավենիքներ, հագուսներ և այլն) մեջ թաքցված տարբերակով:

Հոգեմետ նյութերը, այդ թվում և տրամադրվող, Հայաստան է ներթափանցում հիմնականում փոստային առաքանիների միջոցով՝ որոշակի դոզավորված դեղաձևերի տեսքով (դեղահատեր, դեղապատիճներ, ամպուլաներ):

Տրամադրվող, համաձայն «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների, որպես հոգեմետ նյութ, համապատասխան սահմանված չափերով՝ գրամներով, ներառված է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգոր-

*Թղթակցական հասցեն՝ Աննա Գեղամի Թովմասյան, Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնի թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի փորձաքննությունների բաժանմունքի պետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն: info@nbe.am:*

ծուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը» սահմանող N 1 հավելվածի «Հոգեմետ նյութեր» բաժնի 74-րդ կետում:

Ուստի, հաշվի առնելով նշված հարցի հրատապությունն ու արդիականությունը, ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտի սահմաններում հավատարմագրման գործընթացին ընդառաջ, մշակվել և հաստատվել է «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքի համար գազ-քրոմատագրման մեթոդով փորձաքննությանն առավել հաճախ ներկայացվող տրամադրվող տեսակի հոգեմետ բաղադրատարրի քանակական որոշման մեթոդի վալիդացումը՝ չափման անորոշության գնահատման իրականացմամբ:


Հատկանշական է ընդգծել, որ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 ստանդարտների պահանջների անորոշության չափման նպատակն է՝ լաբորատորիայում կատարվող քանակական հաշվարկների դեպքում ներդնել անորոշության որոշման կատարումը և ստացված տվյալներն օգտագործել՝ քանակական հաշվարկներն ավելի արագ, արդյունավետ և արժանահավատ դարձնելու համար [1]:

Մեր կողմից կատարված աշխատանքները թույլ կտան հնարավորինս արագ, ճշգրտորեն և արդյունավետ կերպով իրականացնել տրամադրվող բաղադրատարր պարունակող հետազոտելի օբյեկտների համապատասխան փորձաքննություններն ու քանակական հաշվարկները:

**Հետազոտական մաս:** Հետազոտելի օբյեկտ է հանդիսանում տրամադրվող, որն առավել հաճախ է ներկայացվում փորձաքննության:

Հետազոտելի նյութի համառոտ բնութագիրը բերված է ստորև.

Տրամադրվող էմպիրիկ բանաձևը -  $C_{16}H_{25}NO_2$  (գծապատկեր 1).



Գծապատկեր. 1. (ցիս-(±)-2-[(դիմեթիլամինո)մեթիլ]-1-(3-մեթոքսիֆենիլ) ցիկլոհեքսանոլ (հիդրոքլորիդ)

Տրամադրվող ափիոդայի խմբի հոգեմետ ցավազրկող նյութ է, որը պատկանում է օփիոիդային ընկալիչների մասնակի ագոնիստ: Օժտված է ուժեղ ցավազրկող ազդեցությամբ, ցուցաբերում է արագ և երկարատև ազդեցություն: Սակայն ցավազրկող ազդեցությամբ զիջում է մորֆինին: Ցավազրկող ազդեցությունը զարգանում է ներքին ընդունումից 15-30 րոպե անց և ազդեցությունը պահպանվում է մինչև 6 ժամ: Կիրառվում է ինչպես միակոմպոնենտ դեղաձևերի, այնպես էլ առավել հաճախ հանդիպող պարացետամոլի հետ հակացված պրեպարատների կազմում:

Հետազոտության մեջ կիրառվել են տրամադրվողի հիդրոքլորիդի ստանդարտ (սերիա TG706), մեթիլստեարատ (Չինաստան) և մեթանոլ («Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ» Հայաստան):

Կշռումները կատարվել են «OHAUS Explorer Pro EP 213 (max 210 g, d=±1mg)» տիպի ստուգաչափված անալիտիկ կշեռքով:

Քրոմատագրաֆիկ մեթոդով հետազոտությունն իրականացվել է «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքի միջոցով հետևյալ պայմաններում [2, 3].

- դետեկտոր – բոցիոնիզացնող,
- աշտարակ – ապակյա, մազանոթային, 10 մ,
- հեղուկ ֆազ – սիլոքսան,
- գազ կրիչ – ջրածին,
- գոլորշիացուցիչի ջերմաստիճան - 250°C,
- դետեկտորի ջերմաստիճան - 250°C,
- խցիկի ջերմաստիճան - 75°C - 280°C (250C/ր):

Որպես ներքին ստանդարտ կիրառվել է մեթիլստետարատի 1մգ/մլ խտաստիճանի մեթանոլային լուծույթ:

**Խիտ (նախնական) ու աշխատանքային ստանդարտ լուծույթների և նմուշային լուծույթների պատրաստումը** [4-6]:

*Տրամադոլի խիտ ստանդարտ լուծույթի պատրաստումը:* Ճշգրիտ կշռված 8մգ տրամադոլի հիդրոքլորիդի ստանդարտը տեղափոխվեց սրվակիկի մեջ, որին ավելացվեց 1մլ ծավալով մեթանոլ և խառնվեց մինչև լուծվելը: Ստացված 1 մլ լուծույթի խտաստիճանը կազմեց 8մգ/մլ (նմուշ TRAMADOL1):

*Տրամադոլի աշխատանքային ստանդարտ լուծույթների պատրաստումը:* 0,5մլ տրամադոլի խիտ ստանդարտ լուծույթից տեղափոխվեց սրվակիկի մեջ, որին ավելացվեց 0,5մլ մեթանոլ: Ստացված 1 մլ լուծույթի խտաստիճանը կազմեց 4մգ/մլ, որից 0,5մլ թողնվեց այդ սրվակիկի մեջ (նմուշ TRAMADOL2), իսկ մյուս 0,5մլ տեղափոխվեց մեկ այլ սրվակիկի մեջ, որին ավելացվեց 0,5մլ մեթանոլ: Ստացված 1մլ լուծույթի խտաստիճանը կազմեց 2մգ/մլ, որից 0,5մլ թողնվեց այդ սրվակիկի մեջ (նմուշ TRAMADOL3), իսկ մյուս 0,5մլ տեղափոխվեց մեկ այլ սրվակիկի մեջ, որին ավելացվեց 0,5մլ մեթանոլ: Ստացված 1 մլ լուծույթի խտաստիճանը կազմեց 1մգ/մլ, որից 0,5մլ թողնվեց այդ սրվակիկի մեջ (նմուշ TRAMADOL4), իսկ մյուս 0,5մլ տեղափոխվեց մեկ այլ սրվակիկի մեջ, որին ավելացվեց 0,5մլ մեթանոլ: Ստացված 1 մլ լուծույթի խտաստիճանը կազմեց 0,5մգ/մլ, որից 0,5մլ թողնվեց այդ սրվակիկի մեջ (նմուշ TRAMADOL5): Ստացված խիտ և աշխատանքային բոլոր ստանդարտ լուծույթների վրա ավելացվեց հավասար քանակությամբ 1 մգ/մլ խտաստիճանի մեթիլստետարատի մեթանոլային լուծույթ:

Ծավալաչափումները կատարվել են ստուգաչափված «Accumax» տեսակի և 100-1000մկլ միկրոքանակների չափման համար նախատեսված չափիչ միկրոպիպետով [5-7]:


**Հետազոտության արդյունքների քննարկում:** Տրամադոլի քանակական որոշման, կալիբրման կորի գծայնության որոշման և անորոշության գնահատման նպատակով կատարվել են վերջինիս համար ստացված խիտ և աշխատանքային բոլոր ստանդարտ լուծույթների (որոնցից յուրաքանչյուրին հավասար քանակությամբ նախապես ավելացվել է 1մգ/մլ խտաստիճանի մեթիլստետարատի մեթանոլային լուծույթ) 1մկլ ծավալով ներարկումներ՝ յուրաքանչյուր խտաչափի համար 3-4 ներարկում է կատարվել (օրինակ TRAMADOL1 նմուշի համար իրականացվել է թվով 3 ներարկումներ, որոնք են համապատասխանաբար՝ TRAMADOL 1/1.D, TRAMADOL1/2.D և TRAMADOL1/3.D) [2,5,6,8]:

Հետազոտման արդյունքները բերված են ստորև ներկայացված աղյուսակ 1-ում, որտեղ ներկայացվում են տրամադոլի համապատասխան նմուշների խտաստիճանները [C], նյութի պահման ժամանակները, ներարկումների թիվը, պիկերի մակերեսները [F]:

**Հետազոտման տվյալները տրամադրվի համար**

Նմուշի անվանումը	Պահման ժամանակը, րոպե.	Լուծույթի խտաստիճանը, մգ/մլ	Պիկի մակերեսը, pA*S
1	2	3	4
TRAMAD1-1.D	5,948	8	3779,52
TRAMAD1-2.D	5,937	8	3014,39
TRAMAD1-3.D	5,941	8	3690,46
TRAMAD2-1.D	5,929	4	1900,58
TRAMAD2-2.D	5,928	4	1879,51
TRAMAD2-3.D	5,931	4	1914,24
TRAMAD3-1.D	5,92	2	938,52
TRAMAD3-2.D	5,922	2	881,88
TRAMAD3-3.D	5,919	2	790,94
TRAMAD4-1.D	5,914	1	367,33
TRAMAD4-2.D	5,915	1	324,12
TRAMAD4-3.D	5,913	1	444,33
TRAMAD5-1.D	5,913	0,5	169,46
TRAMAD5-2.D	5,909	0,5	201,15
TRAMAD5-3.D	5,909	0,5	201

Տրամադրվի յուրաքանչյուր խտաստիճանի լուծույթը հետազոտվում է առնվազն 3 անգամ, ստացված պիկերի մակերեսների արժեքները միջինացվում են և վերջիններս (յուրաքանչյուր խտաստիճանի համար առանձին) տեղադրվում են համապատասխան գրաֆիկի մեջ, որի արսցիսների առանցքի վրա գտնվում են համապատասխան խտաստիճանների, իսկ օրդինատների առանցքի վրա՝ պիկերի մակերեսների միջինացված արժեքները: Տրամադրվի բաղադրատարրի համար խտաստիճան-մակերես հատման կետերով կառուցվում են կորեր (կալիբրման կորի եղանակ) (տե՛ս գծապատկեր 2): Գծային կախման դեպքում ( $y=kx$ ) համապատասխան խտաստիճանների և պիկերի մակերեսների արժեքները տեղադրելով համապատասխան բանաձևի մեջ՝ հաշվարկվում է k գործակիցը, ինչը հետագայում օգտագործվում է անորոշության հաշվարկն իրականացնելիս, որը և տրամադրվի համար կազմել է 442,9:



Գծապատկեր 2. Տրամադրվի կալիբրացիոն կորը

**Անորոշությունների գնահատման կատարում:** Յուրաքանչյուր հետազոտության արդյունքում ստացված պիկերի մակերեսների արժեքները (բոլոր խտաստիճանների համար՝ առանձին-առանձին) բաժանվում են տվյալ բաղադրատարրի համար ստացված  $k$  գործակցի համապատասխան արժեքների վրա, այնուհետև ստացված թվերը տվյալ հաստատուն խտաստիճանի թվային արժեքի հետ միասին միջինացվում են (թվաբանական միջին): Ստացված թվից հերթով հանվում են պիկերի մակերեսների արժեքների և  $k$  գործակցի հարաբերության արդյունքում ստացված թվերը: Տարբերության արդյունքում ստացված թվերը հերթով քառակուսի են բարձրացվում: Քառակուսի բարձրացված թվերը գումարվում են, գումարը բաժանվում է  $(n-1)$ -ի, որտեղ  $n$ -ը յուրաքանչյուր խտաստիճանի համար կատարված հետազոտությունների թիվն է: Այնուհետև, ստացված թվից քառակուսի արմատ է հանվում, որի արդյունքում ստացվում է  $S$ -ի արժեքը, որն իրենից ներկայացնում է ստանդարտ շեղման գործակիցը:

Յուրաքանչյուր կոնցենտրացիայի համար անորոշությունը ( $U$ ) որոշվում է հետևյալ բանաձևով.  $U=S/\sqrt{n}$ , որտեղ  $n$ -ը տվյալ կոնցենտրացիայի համար կատարված ներարկումների թիվն է: Վերոնշյալ ձևով տվյալ բաղադրատարրի յուրաքանչյուր խտաստիճանի համար ստացվում են անորոշության արժեքները, որոնց հիման վրա հաշվարկվում է գումարային անորոշությունը ( $U_{comb}$ ) հետևյալ բանաձևով.  $U_{comb}=k \times \sqrt{(U_1^2+U_2^2+U_3^2+\dots+U_n^2)}$ , որտեղ  $k$ -ն կոչվում է ծածկույթի ընդգրկման գործակից և հիմնականում այն նորմալ բաշխման դեպքում ընդունվում է հավասար 2-ի ( $k=2$ ):

Նման ձևով հաշվարկվել է գումարային անորոշության արժեքը տրամադրվի հիդրոքլորիդի գործարանային արտադրության ստանդարտ նմուշի (առաջնային ստանդարտ) համար, որը կազմում է  $\pm 0,66$  մգ/մլ:

Վերոնշյալ բաղադրատարրի պարունակությամբ օբյեկտների փորձաքննության դեպքում, երբ անհրաժեշտ է կատարել տրամադրվի քանակական հաշվարկ, հետազոտելի պինդ դեղաձևերից կշռվում են համապատասխան քաշով փորձանմուշներ, իսկ հեղուկների դեպքում՝ վերջիններից վերցվում է 1 մլ, որը չորացվում է մինչև չոր մնացորդ, այնուհետև կշռվում է հաստատուն չոր մնացորդի քաշը և այդ փորձանմուշներից քիմիապես մաքուր օրգանական լուծիչ մեթանոլի միջոցով պատրաստվում են 1 մլ ծավալով լուծանվածքներ, ավելացվում հավասար քանակությամբ 1 մգ/մլ կոնցենտրացիայով մեթիլստեարատի մեթանոլային լուծույթ, որոնցից յուրաքանչյուրը ենթարկվում է գազ-քրոմատագրման՝ առնվազն 3 անգամ: Ստացված նմուշների ներարկումներից ստացված պիկերի մակերեսների միջինացված արժեքը բաժանվում է տրա-



մադրվի կալիբրավորման կորի կառուցման ժամանակ արդեն նախապես ստացված  $k$  գործակցի արժեքին: Այսպիսով, ստացված թիվն իրենից ներկայացնում է որոշակի հայտնի զանգվածով վերցված հետազոտելի փորձանմուշում ուսումնասիրվող տրամադրվող բաղադրատարրի խտաստիճանը, որից հետո կատարվում է հետազոտված համապատասխան զանգվածի վերահաշվարկ, այնուհետև ներկայացված ամբողջ զանգվածի վրա՝ վերջինիս մեջ ստանալով հետազոտվող տրամադրվող բաղադրատարրի քանակական պարունակությունը միլիգրամներով [9-11]:

**Մեթոդի վալիդացումը:** Մշակված մեթոդը վալիդացվել է հետևյալ կետերով՝ յուրահատկություն (Specificity), գծայնություն (Linearity), ճշգրտություն (Accuracy), կրկնելիություն (Repeatability) և վերարտադրելիություն (Intermediate precision):

**Յուրահատկություն /սպեցիֆիկություն/-** ցույց է տալիս, որ տրամադրվող ունի որոշակի պահման ժամանակ (Retention times) և այդ պահման ժամանակը լուծիչի բաղադրամասերի և հարակից նյութերի պահման ժամանակների հետ չեն համընկնում [7, 12]:

**Գծայնությունը.** ցույց է տալիս, որ աշխատանքային ստանդարտ լուծույթների ներարկումներից ստացված համապատասխան գծապատկերի մակերեսները գծային կախվածության մեջ են այդ լուծույթների խտաստիճաններից: Ուսումնասիրությունները կատարված են 5-ական խտաստիճանի աշխատանքային ստանդարտ լուծույթների համար: Գծայնության կորելացիայի ընդունման չափանիշն է  $r^2 \geq 0,99$ : Տրամադրվողի համար, 0,5մգ/մլ-8մգ/մլ տիրույթում ուսումնասիրելով 5 խտաստիճանային կետ, որտեղ կորելացիոն գործակիցը կազմեց  $r^2=0,999$  (նկ.2) [3, 7, 12]:

**Ճշգրտություն.** ցույց է տալիս, որ մշակված մեթոդով խտաստիճանները ճիշտ են որոշվում: Ուսումնասիրությունը կատարվել է 3 տարբեր խտաստիճանային աշխատանքային ստանդարտ լուծույթների երեքական ներարկումներով: Որպես արդյունք՝ վերցվել է 3 ներարկումների միջին թվաբանականը [7, 12]:

**Կրկնելիությունը.** ցույց է տալիս, որ քրոմատոգրաֆիկ համակարգը կայուն է աշխատում և նույն գործընթացի ընթացքում, միևնույն նմուշի հաջորդաբար ներարկումների դեպքում ստացվում են կրկնվող արդյունքներ (տես աղ.1) [7,12]:

**Վերարտադրելիություն.** ցույց է տալիս, որ հետազոտությունը կատարելով այլ օր կամ այլ աշխատողի կողմից ստացվել են վերարտադրելի արդյունքներ [7,12]:

Քանակական որոշման ճշգրտությունը վալիդացվել է հետևյալ եղանակով: Հաջորդաբար ներարկվել են տրամադրվողի 3 տարբեր խտաստիճաններով աշխատանքային ստանդարտ լուծույթներ: Վերը նշված լուծույթները պատրաստվել են համապատասխան խիտ ստանդարտ լուծույթներից՝ կատարելով համապատասխան նոսրացումներ, ինչպես որ մանրամասն նկարագրված է աշխատանքային լուծույթների պատրաստման մասում: Որից հետո յուրաքանչյուր կոնցետրացիայի լուծույթին ավելացվել է հավասար քանակությամբ մեթիլստեարատի 1 մգ/մլ կոնցետրացիայի մեթանոլային լուծույթ և ներարկվել են հաջորդաբար: Յուրաքանչյուր խտաստիճանը 3 անգամ ներարկելուց հետո ստացվել են սպեցիֆիկ, գծային, ճշգրիտ, կրկնվող և վերարտադրելի արդյունքներ:

Փորձաքննությանը ներկայացված հետազոտելի օբյեկտների մեջ տրամադրվող բաղադրատարրերի քանակական հաշվարկները կատարվում են ներկայացված մեթոդի համապատասխան՝ և հաշվի է առնելով տվյալ բաղադրատարրի անորոշության արժեքները՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 ստանդարտների պահանջների:

**Եզրակացություն:** ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական փորձաքննությունների բաժնում մեր կողմից տրամադրվող բաղադրատարրի՝ «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքով համապա-

տասխան քրոմատագրման մեթոդի կիրառմամբ կալիբրման կորերի ստացման, քանակական հաշվարկի կատարման և անորոշության գնահատման, ինչպես նաև այդ մեթոդի վալիդացման աշխատանքները թույլ են տալու հնարավորինս արագ, ճշգրտորեն և արդյունավետ իրականացնել փորձաքննության ներկայացված օբյեկտների բաղադրության մեջ տրամադրվող բաղադրատարրերի փորձաքննություններ և քանակական հաշվարկներ՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 ստանդարտների պահանջների:

## Գրականության ցանկ

1. Agilent Technologies 6890, Gas Chromatograph, Control”, 03-914947-32:Rev. 10.
2. Validation of analytical Procedures, Guide to Good Manufacturing Practise for medical products part 2, PIC/S. January 2013. 50c.
3. Easycalculator [www.easycalculator.com/statistics/correlation.php](http://www.easycalculator.com/statistics/correlation.php)
4. “Agilent 6890N Gas Chromatograph, User Information”, Released: MAY 2001, Part No. G1530-90210.
5. Guidelines on Representative Drug Sampling, in cooperation with the Drugs Working Group of the European Network of Forensic Science Institutes, UNITED NATIONS. New York, 2009. 76 p.
6. Guidelines on Sampling of Illicit Drugs for Quantitative Analysis”, Enfsi Drugs Working Group, Ref. Code: Dwg-Gqs-002. April 14 th, 2014.
7. Руководство для предприятий фармацевтической промышленности (методические рекомендации) Часть I-III. – Москва: Спорт и Культура; 2007.
8. Еремин С.К., Изотов Б.Н., Веселовская Н.В. Анализ наркотических средств. Москва : Мысль; 1993, 259 с.
9. Quantifying Uncertainty in Analitical Measurement, Eurachem/ Citac Guide - CG4, 133p.
10. A Guide on Measurement Uncertainty in Chemical and Microbiological Analysis Tecnical Guide 2 Accredited Laboratory Sac-Singlas, 104 p.
11. Handbook for Calculation of Measurement Uncertainty in Environmental Laboratories. 2003;5:41.
12. Машковский М.Д. Лекарственные средства. 15-е изд. – Москва: РИА Новая волна: 2010. 1206 с.

## СУДЕБНО-ТОКСИКОЛОГИЧЕСКАЯ ЭКСПЕРТИЗА ТРАМАДОЛСОДЕРЖАЩИХ ОБЪЕКТОВ И ВАЛИДАЦИЯ МЕТОДА ГАЗОВОЙ ХРОМАТОГРАФИИ В СООТВЕТСТВИИ С ТРЕБОВАНИЯМИ ISO / IEC 17025: 2005

**Товмасын А.Г.**

*Статья посвящена одному из подходов повышения эффективности производства судебных экспертиз, а именно использованию механизмов валидации методических материалов, включая такие процедуры как пробоотбор и пробоподготовка. Подчеркивается важность и прикладной характер рассматриваемого подхода, а также обязательность выполнения упомянутых экспертиз в соответствии с требованиями международного стандарта ISO/IEC 17025:2017. Отмечается, что за последние три года в Национальном бюро экспертиз РА разработаны и внедрены в судебно-экспертную практику валидированные методы количественного расчета и оценки неопределенности измерений по активному компоненту для наркотических средств. На примере судебно-токсикологической экспертизы трамадолсодержащих объектов, с использованием полученных в ходе экспериментальных*

исследований значений времени удержания, обработки построенных калибровочных зависимостей и расчетных величин площадей пиков рассчитаны значения коэффициентов “k” и “s”. В статье отмечается также, что валидация разработанного метода была выполнена в соответствии со следующими параметрами «Specificity», «Linearity», «Accuracy», «Repeatability» и «Intermediate precision».

**Ключевые слова:** трамадол, калибровочные кривые, валидация метода, наркотики, газовая хроматография, неопределенность, линейность, плотность.

## FORENSIC TOXICOLOGICAL EXPERTISE OF TRAMADOL-CONTAINING OBJECTS AND VALIDATION OF THE GAS CHROMATOGRAPHY METHOD IN ACCORDANCE WITH THE REQUIREMENTS OF ISO / IEC 17025: 2005

***Tovmasyan A.***

*The article is devoted to one of the approaches to increasing the efficiency of conducting forensic expertise, particularly to the use of mechanisms for validating methodological materials, including such procedures as sampling and sample preparation. The importance and applied nature of the approach is emphasized, as well as the obligation to perform the mentioned expertise in accordance with the requirements of the international standard ISO / IEC 17025: 2017 is described. It is noted that over the past three years the National Bureau of Expertises of the Republic of Armenia has developed and introduced into forensic practice validated methods of quantitative calculation and estimation of measurement uncertainty for the active component for narcotic drugs. On the example of forensic toxicological expertise of tramadol-containing objects, using the retention times obtained in the course of experimental studies, processing the constructed calibration dependences and calculated values of the peak areas, the values of the coefficients “k” and “s” were calculated. The article also notes that the developed method was validated in accordance with the following parameters «Specificity», «Linearity», «Accuracy», «Repeatability» and «Intermediate precision».*

**Key words:** tramadol, calibration curves, method validation, drugs, gas chromatography, uncertainty, linearity, density.

**ԱՊՐԱՆՔԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ) ՈՐԱԿ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

**Հարությունյան Ա.Ա., Գաբրիելյան Հ.Վ., Հակոբյան Ա.Ե.**

*Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան*

Հողվածում ներկայացվում է ապրանքների որակի գնահատման խնդիրները, որոնք հաճախ հանդիսանում են դատական փորձաքննության առարկա: Հողվածի նպատակն է ներկայացնել որակի հսկողության, որակական հետազոտությունների անցկացման ընթացքը, որոնց անհրաժեշտությունը հիմնականում ծագում է պետական գնումների շրջանակներում կատարված գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների որակյալ հատկանիշների համապատասխանության պարզման, արտադրանքի փաստացի որակական հատկանիշների և տեխնիկական բնութագրերում առկա ցուցանիշների համեմատության, ինչպես նաև արտադրանքի փաստացի որակական հատկանիշների և դրա համար վճարված արժեքի համապատասխանության պարզման նպատակով՝ պետության պատճառված վնասների հաշվարկման նկատառումներից ելնելով: Այդ նպատակով հողվածում ներկայացված են որակի ստուգման տեսակները, գնահատման մեթոդները և մեթոդիկաները: Նման փորձաքննությունները հնարավորություն են ընձեռում պարզել և կանխել ոչ որակյալ արտադրատեսակների հետագա շահագործումը և ապահովում են պետական միջոցների առավել նպատակային ու արդյունավետ բաշխումը:

**Բանալի բառեր.** որակ, փորձաքննություն, արտադրանք, դատաապրանքագիտություն, որակի մակարդակ, որակի գնահատում:

Հաճախ օգտագործվող որակ հասկացությունը բազմակողմանի փիլիսոփայական կատեգորիա է, որն ընդգրկում է ինչպես մարդու գիտակցությունը, այնպես էլ արտաքին աշխարհի երևույթները: Որակը դիտարկվում է նաև որպես տնտեսական կատեգորիա և որպես այդպիսին օբյեկտի որակն արտացոլում է ԳՏԱ-ի (գիտատեխնիկական առաջընթացի) և հասարակության տնտեսական զարգացման միտումները: Որակի հարցն առաջին անգամ քննարկվել է մ.թ.ա. III դարում Արիստոտելի կողմից, որը հանգել է հետևյալ եզրակացության՝ «Որակը բարիք է, որն ապահովում է երջանկություն»: 19-րդ դարում որակի գաղափարը հետազոտել է Հեգելը: Ըստ Հեգելի՝ «Որակն առաջին հերթին կեցության հետ նույնականության որոշակիություն է այնպես, որ, երբ ինչ որ բան կորցնում է իր որակը, ապա այն դադարում է գոյություն ունենալ որպես այդպիսին»:

Արտադրանքի որակի գնահատումը հաճախ հանդիսանում է դատական փորձաքննությունների հետազոտման առարկա: Նման դեպքերում որակի գնահատման ողջ համալիրն ապահովվում է կոմպլեքս հետազոտությունների արդյունքում:

Որակի սահմանման հարցում չկա ընդհանուր մոտեցում: Այստեղից հետևում է, որ որակն ունի սուբյեկտիվ բնութագիր: Սովորաբար «որակը» սահմանվում է որպես՝

- օգտագործման պիտանիություն,

Թղթակցական հասցեն՝ Աննա Հարությունյան Աշոտի, ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն; info@nbe.am

- պահանջների բավարարում,
- արտադրանքին, ծառայությանը ներկայացվող պահանջներին համապատասխանություն,
- շահութաբերության և պատվիրատուի բավարարվածություն,
- սպառողի սպասումներին համապատասխանություն,
- շուկայի սպասելիքները բավարարող մակարդակ:

Որակն արտացոլում է օբյեկտի բաղադրիչ տարրերի առանձնահատկությունները բնութագրող այն կայուն փոխհարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս մի օբյեկտը տարբերելու մյուսից: Այսինքն, որակն առարկաների և երևույթների հարաբերական կայունությունն է, նրանց հնքնությունը, այն, ինչով դրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից:

Տնտեսվարող սուբյեկտները արտադրանքի որակի ապահովմանն ու փոփոխությանը հասնում են արտադրատնտեսական գործունեության ամբողջ գործընթացի արդյունքում՝ արտադրանքի կենսացիկլի բոլոր փուլերում գիտնականների, մասնագետների, ծառայողների, բանվորների մեծ կոլեկտիվի համատեղ ջանքերի շնորհիվ: Արտադրանքի որակի բարձրացումը, այսինքն՝ նրա հատկությունների բարելավումն ունի տեխնիկական և տնտեսական սահմաններ: Տեխնիկական սահմանները կանխորոշվում են ելակետային նյութերի քիմիական բաղադրությամբ և հատկություններով, կոնստրուկցիայի ամրության սահմանումով: Տեխնիկական սահմանները, որպես կանոն, ավելի լայն են, քան տնտեսականները: Տնտեսական սահմանը արտադրանքի որակի բարձրացման տնտեսական նպատակահարմարությունն է: Արտադրանքի որակը նպատակահարմար է բարձրացնել այնպիսի սահմաններում, երբ տվյալ իրն ավելի լավ է բավարարում այն պահանջմունքը, որի համար ստեղծվում է: Ընդ որում, արտադրանքի սպառողական հատկությունների բարելավման, այսինքն՝ որակի բարձրացման, հասարակական պահանջմունքները չեն կարող բավարարվել ռեսուրսներից անջատ: Հենց հասարակական պահանջմունքների ու ռեսուրսների համադրումն է հնարավորություն տալիս օպտիմալացնելու արտադրանքի որակը, ապահովելու նրա հասարակայնորեն անհրաժեշտ մակարդակը, որն իր հերթին պայմանավորված է հասարակության պահանջմունքների կառուցվածքով ու դինամիկայով, արտադրողական ուժերի զարգացման աստիճանով, ազգային պատմական առանձնահատկություններով, կյանքի, կլիմայական պայմաններով և այլն [1]:

Համեմատական իմաստով գերազանցության աստիճանն արտահայտելու համար կամ քանակական իմաստով տեխնիկական գնահատում կատարելու ժամանակ «որակ» տերմինը սովորաբար չի գործածվում մեկուսացված: Այս իմաստներն արտահայտելու համար պետք է գործածել որակական ածականներ, օրինակ՝ կարող են գործածվել հետևյալ տերմինները.

- *հարաբերական որակ*. այս դեպքում օբյեկտները դասակարգվում են ըստ իրենց գերադասության աստիճանի կամ համեմատության իմաստով,
- *որակի մակարդակ քանակական իմաստով*. օգտագործվում են վիճակագրության ընդունման ժամանակ,
- *որակի չափ*. կատարում են ճշգրիտ տեխնիկական գնահատումներ:

Գոյություն ունեն որակ տերմինի բազմաթիվ բնութագրեր, որոնց առկայությունը վկայում է այն մասին, որ որպես հիմնական բնութագիր դրանցից որևէ մեկն ընտրելը բավականին բարդ խնդիր է: Խնդրի բարդությունը այն է, որ տարբեր որակական չափանիշներն իրարից խիստ տարբերվում են: Որոշ տեսաբաններ որակը նկարագրում են այնպիսի տերմինների միջոցով, ինչպիսին է «գիտակցված կատարելություն» տերմինը: Չնայած՝ որակը տարբեր մարդկանց կողմից սահմանվում, գնահատվում է ոչ միատեսակ կամ միևնույն ձևով, բայց կարող է ձևա-

կերպվել որակի հետևյալ ընդհանրացված սահմանումը. «որակը հանդիսանում է սպառողների սպասում կամ նրանց պահանջմունքների բավարարում»:

Որակի համակարգի օգնությամբ կարելի է ոչ միայն հայտնաբերել հիմնախնդիրներ, այլ նաև լուծել դրանք: Հիմնախնդիրների հայտնաբերումը կատարվում է ինչպես արտադրական, այնպես էլ հետարտադրական պրոցեսում: Դրանք լուծելու համար անհրաժեշտ է, որ մասնագետներն իրոք պատրաստված լինեն: Որակի ապահովումը սկսվում է հումքի և նյութերի ստուգումով: Գոյություն ունի ստուգման հինգ տեսակ.

- օպերատիվ,
- պարբերական-պլանային,
- ընտրովի,
- թռուցիկ,
- միջանցիկ:

Օպերատիվ ստուգումը կատարվում է վարպետի, տեխնոլոգի և նրանց օգնականների միջոցով: Յուրաքանչյուր դեպք, որը կապված է որակի փոփոխման հետ ուսումնասիրվում է տեղում: Կազմակերպվում են միջոցառումներ՝ պատճառը արագ որոշելու և այն վերականգնելու համար:

Պարբերական-պլանային ստուգումը կատարվում է ըստ համապատասխան պլանային գրաֆիկի: Այս պլանի մեջ մտնում է նաև այն անձանց նշումը, ովքեր որակի ստուգման վերաբերյալ պարտականություններ են կրում:

Ընտրովի ստուգումն այն ստուգումն է, երբ ամբողջ արտադրանքի կամ տվյալ տեսակների միջից ընտրվում է մի քանի օրինակ և հենց դրանք էլ ստուգվում են:

Թռուցիկ ստուգումը կազմված է պարբերական և պատահական ստուգումներից, որոնք կատարվում են անմիջապես աշխատանքային վայրում:

Միջանցիկ ստուգումը կատարվում է բացահայտելու համար, թե ինչն է հանդիսանում ապրանքի ցածր որակի պատճառը: Ստուգումը կատարվում է սկսած հումքից մինչև պատրաստի արտադրանքի թողարկումը:

Արտադրանքի որակի, նրա տեխնիկական շահագործական հատկությունների գնահատման համար կիրառվում են մի շարք ցուցանիշներ: Դրանք տարբերվում են կախված արտադրանքի բնույթից և նշանակությունից: Օրինակ, հումքի համար դա օգտակար նյութերի պարունակությունն է: Կիրառվում են նաև խիստ յուրահատուկ ցուցանիշներ, ինչպիսիք են ներկի ամրությունը, գործվածքի փոքրանալը և այլն: Մեքենաների գլխավոր տեխնիկական շահագործական ցուցանիշներ են համարվում կարողությունը, արտադրողականությունը, ճշտությունը, բեռնաբարձությունը, սպառման առարկաների համար շաքարի կամ ճարպի պարունակությունը սննդամթերքի մեջ, սառնարանի օգտակար տարողությունը և այլն: Երկարատև օգտագործման արտադրանքի որակի գնահատման համար կիրառվում են հուսալիության և երկարակեցության ցուցանիշները:

Ինչ վերաբերում է շինվածքի երկարակեցությանը, ապա դա նրա ծառայության ժամեկտն է մինչև առաջին կապիտալ նորոգումը կամ լրիվ մաշվելը: Շինվածքի հուսալիությունն ասելով պետք է հասկանալ շահագործման նորմալ պայմաններում անխափան աշխատանքի նրա ունակությունը շահագործական հատկությունների լրիվ պահպանմամբ:

Առանձին ճյուղերում, գլխավորապես թեթև, սննդի, քիմիական և ռետինի արդյունաբերության մեջ որակի բնութագրման համար օգտագործվում է նաև տեսակայնության ցուցանիշները: Արտադրանքը տեսակների է բաժանվում կախված նրա արտաքին հարդարումից, ամրությունից, համի և մյուս հատկություններից [2]:

ՀՍ ԻՍՕ 8402 ստանդարտով ամրագրված են որակի ղեկավարման և ապահովման այն

հիմնական տերմինները, որոնք կիրառվում են բոլոր բնագավառներում և օգտագործվում որակին վերաբերող ստանդարտների մշակման, ինչպես նաև միջազգային կապերում փոխըմբռնման նպատակով:

Որակի ղեկավարումն ընդհանուր ղեկավարման գործընթացի մեջ այն բոլոր գործառույթներն են, որոնք որոշում են որակի քաղաքականությունը, նպատակները, պարտականությունները և իրագործվում են որակի համակարգի շրջանակներում այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝

- որակի ծրագրավորումը,
- որակի կառավարումը,
- որակի ապահովումը,
- որակի բարելավումը:

Այսպես, որակի ծրագրավորումը գործունեություն է, որը ներառում է նպատակներ, որակի նկատմամբ պահանջներ և որակի համակարգի տարրերի կիրառումներ: Որակի կառավարումը գործնական բնույթի մեթոդներ ու գործունեություն են, որոնք օգտագործվում են որակի նկատմամբ պահանջները բավարարելու համար: Որակի ապահովումը որակի համակարգերի շրջանակներում իրականացվող ծրագրավորված և համակարգված գործունեություն է, ինչպես նաև, եթե պահանջվում է, վստահություն ստեղծելու համար անհրաժեշտ հավաստման բավարար ապացույցներ առ այն, որ օբյեկտը բավարարում է որակի նկատմամբ պահանջները: Որակի բարելավումը կազմակերպության գործունեության և գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկության միջոցառումներն են: Որակի համակարգը որակի ղեկավարումն իրականացնելու համար կազմակերպական կառուցվածքի, ընթացակարգերի, գործընթացների և ռեսուրսների ամբողջություն է: Որակի ձեռնարկը փաստաթուղթ է, որտեղ շարադրված է որակի քաղաքականությունը, նաև նկարագրված է կազմակերպության որակի համակարգը: Որակի օղակը փոխկապակցված գործունեությունների հայեցակարգային մոդելն է, որն ազդում է որակի վրա տարբեր փուլերում, սկսած պահանջմունքների պարզաբանումից մինչև դրանց բավարարման հավաստումը: Որակի աուդիտը համակարգված և անկախ քննարկում է, որը որոշում է, թե որակի գործունեությունը և դրա հետ կապված արդյունքները որքանով են համապատասխանում ծրագրված միջոցառումներին, այդ միջոցառումները որքանով են արդյունավետ ներդրման համար [3]:

Արտադրանքի որակի ցուցանիշներն ու դրանց բացահայտման մեթոդներն ամբողջությամբ չեն որոշում այնպիսի բարդ և քանակապես ընդարձակ կատեգորիայի բացահայտման խնդիր, ինչպիսին արտադրանքի որակն է: Դրա համար էլ կիրառվում են արտադրանքի որակի մակարդակի գնահատման մեթոդները:

Արտադրանքի որակի մակարդակի գնահատման մեթոդի տակ հասկացվում է տրամաբանական եւ մաթեմատիկական գործողությունների ամբողջություն, որի ժամանակ օգտագործվում են առանձին արտադրանքի որակի ցուցանիշներ կամ դրանց որոշակի համակցություններ: Դրա նպատակը արտադրանքի նման տարբերակների հետ համեմատելու հիման վրա արտադրանքի որակի ամբողջական որոշումն է և սպառողի համար որակապես առավել նախընտրելի լավ տարբերակն ընտրելու որոշման ընդունումն է:

Արտադրանքի որակի մակարդակի գնահատումը գնահատվող արտադրանքի որակի ցուցանիշների և բազային նշանակությունների համադրումն է: Դա կարելի է ներկայացնել երկու ձևով՝

- քանակական,
- որակական:

Քանակական ձևով գնահատականն արտահայտվում է մի թվով, որն իրենից ներկայացնում



է որակի համալիր ցուցանիշի նշանակություն, որն արտահայտում է արտադրանքի հատկությունների որոշակի համադրություն:

Որակական ձևով գնահատականը ներկայացվում է որպես հաստատում այն բանի, որ արտադրանքը՝ դիտարկվող հատկությունների համադրությամբ, համապատասխանում է շուկայի որոշակի պահանջներին, գերազանցում կամ զիջում է դրան:

ԳՕՍՍ 15467-79 նախատեսում է արտադրանքի որակի գնահատման հետևյալ մեթոդները.

- դիֆերենցիալ մեթոդ,
- համալիր մեթոդ,
- խառը մեթոդ,
- վիճակագրական մեթոդ:

*Դիֆերենցիալ մեթոդը* որպես արտադրանքի որակի գնահատման մեթոդ՝ հիմնված արտադրանքի որակի եզակի ցուցանիշների օգտագործման վրա: Այս մեթոդը կայանում է համեմատվող բոլոր տարբերակներին բնորոշ եզակի ցուցանիշների ամբողջական արժեքի համակարգման և համեմատական վերլուծության ու դրա հիման վրա եզակի ցուցանիշների լավագույն հավաքածու ունեցող տարբերակներից մեկի նախապատվության մասին որոշման ընդունման մեջ: Այս մեթոդի շարադրման էության մեջ կա հակասություն, որը բարդացնում է այս մեթոդի լայնորեն օգտագործումն ուղիղ իմաստով: Այն կայանում է նմանատիպ բոլոր ապրանքներից լավագույն տարբերակի ընտրության մեջ և տարբերվում է զանազան եզակի ցուցանիշների արժեքներով: Բանը նրանում է, որ եզակի ցուցանիշները մի տարբերակից մյուսը փոփոխվում են ոչ միակողմանի (օրինակ՝ չեն կարող միայն լավանալ): Սովորաբար արտադրանքի ցանկացած տարբերակ մյուսներից տարբերվում է լավագույն դեպքում մեկ կամ մի քանի ցուցանիշներով և վատագույն դեպքում՝ մնացած եզակի ցուցանիշները համեմատելով մյուս տարբերակների արժեքների հետ: Եվ սա բնորոշ է ոչ միայն բարդ, այլ նաև համեմատաբար պարզ, քիչ պարամետրերով արտադրանքներին, օրինակ՝ էլեկտրոնային տեխնիկայի այնպիսի տարրերին, ինչպիսիք են կոնդենսատորը, ռեզիստորը և այլն, էլեկտրակենցաղային ապրանքներին, հագուստին, կոշիկներին, որոնք բնորոշվում են քիչ թվով ցուցանիշներով, հատկապես նշանակման ցուցանիշներով: Բարդ արտադրանքների համար, որոնք բնորոշվում և տարբերվում են տասնյակ ու հարյուրավոր եզակի ցուցանիշներով, նախընտրելի տարբերակի ընտրությունը դառնում է անլուծելի խնդիր: Այդ թերությունը կարելի մեղմացնել առանձին եզակի ցուցանիշների կշռելիության գործակցի օգտագործման ճանապարհով: Բայց դա զգալիորեն բարդացնում է մեթոդի իրականացումը, քանի որ պահանջում է փորձագիտական գնահատականների կիրառում որակի ցուցանիշների կշռելիության գործակցի հաստատման համար, ինչն էլ իր հերթին մեծացնում է մեթոդի սուբյեկտիվությունը:

Չնայած արտադրանքի որակի գնահատման դիֆերենցիալ մեթոդին օրգանապես հատուկ են թերություններ, այնուամենայնիվ այն ունի հատուկ նշանակության ինքնուրույն կիրառություն հետևյալ հատուկ դեպքերում.

- առանձին եզակի ցուցանիշների փոփոխման միտումների վերլուծության և առաջանցիկ ստանդարտներում ներառելու ճանապարհով դրանց հասնելու վերաբերյալ առաջարկությունների մշակման ժամանակ,
- համեմատաբար պարզ արտադրանքների որակի գնահատման ժամանակ, որոնց մոտ ցուցանիշներից մեկն ունի արժեքի փոփոխման բարձր խզում դրանց լայն շրջանակներում, իսկ մյուս ցուցանիշներն ունենում են ոչ մեծ խզումներ (օրինակ՝ ռեզիստորները, էլեկտրական շարժիչները, կենցաղային էլեկտրասարքավորումները և այլն),

- արտադրանքի ընտրության տարբերակների բացակայության ժամանակ, քանի որ շատ եզակի ցուցանիշների արժեքներ ստացվում են հաշվարկներից (օրինակ՝ կոնդենսատորի տարողունակության և թույլատրելի լարվածության արժեքը, էլեկտրական շարժիչի հզորությունն ու պտույտների թիվը), անտրոպոմետրիկ (մարդաչափական) պարամետրերից (օրինակ՝ կոշիկներ, հագուստ և այլն, որոնց համար չափսային ցուցանիշների բազմազանությունը բացակայում է, սակայն պահպանվում է գեղագիտական ցուցանիշներում) և ուրիշներ,

- արտադրանքի շահագործման պայմաններում դրա ցուցանիշների զուգակցման անհրաժեշտության ժամանակ (օրինակ՝ սարքավորման սնուցման լարվածությունը ցանցի լարվածության հետ, արտադրանքի շահագործման ջերմաստիճանային ռեժիմը կլիմայական պայմանների հետ և այլն) կամ արտադրանքի գունային ձևավորումը ինտերիերի հետ և այլն:

Հաշվի առնելով արտադրանքի որակի գնահատման դիֆերենցիալ մեթոդի նշված առանձնահատկությունները՝ պետք է ասել, որ գործնականում այն ունի սահմանափակ կիրառություն: Դրա համար էլ առավելություն տրվում է այն մեթոդներին, որոնք թույլ են տալիս համալիր ձևով մոտենալ արտադրանքի որակի գնահատմանը:

*Համալիր մեթոդը* որպես արտադրանքի որակի գնահատման մեթոդ հիմնված է դրա համալիր ցուցանիշների օգտագործման վրա, այսինքն ցուցանիշներ, որոնք բնութագրում են արտադրանքի մի քանի հատկություններ:

Այս մեթոդի իրականացման հիմնական մոտեցումը համարվում է համալիր ցուցանիշի կառուցումը որոշակի ֆունկցիայի տեսքով՝ որակի մի քանի եզակի ցուցանիշների, որոնք գնահատվում և համեմատվում են արտադրանքի նմուշի հետ: Այսպիսի մոտեցումը կապված է սկզբունքային դժվարությունների հետ, որոնք կայանում են հետևյալում.

- որակի համալիր ցուցանիշի ընտրության մեջ, այսինքն որոշակի բարդ հատկության և դրա մեծության ցուցանիշի,

- արտադրանքի բարդ հատկության բովանդակալից նկարագրության մեջ, որը բավական օբյեկտիվ և ամբողջական կարտացոլի եզակի ցուցանիշներով բնութագրվող տարրական հատկությունների ամբողջությունը և կձևավորի այդ արտադրանքի որակը,

- համալիր ցուցանիշների ֆունկցիոնալ կախվածությունը եզակի ցուցանիշներից հաստատելու մեջ, որը շատ դեպքերում անհայտ է,

- մի ցուցանիշի՝ մյուս ցուցանիշի հաշվին փոխադարձ կոնպենսացիայի մեջ, այսինքն եզակի ցուցանիշների արժեքների տարբեր հավաքածուների դեպքում համալիր ցուցանիշը կարող է լինել նույնը կամ մեծությամբ մոտ նմանատիպ արտադրանքների համեմատվող տարբերակներում,

- սահմանված ֆունկցիան կարող է լինել ոչ մոնոտոն (միօրինակ), ինչը կրթերի արտադրանքի որակի գնահատման երկիմաստության:

Նշված դժվարությունների հաղթահարումն ապահովվում է ժամանակակից գիտության ձեռքբերումների օգտագործմամբ և որպես փորձագետ՝ փորձառու մասնագետների ներգրավմամբ համալիր և եզակի ցուցանիշների միջև ֆիզիկաքիմիական տեսանկյունից ոչ ակնհայտ կախվածություն սահմանելու համար:

Բերենք նման մոտեցման իրականացման օրինակ: Մետաղահատող հաստոց-սարքավորումն ունի մի շարք հատկություններ, որոնցից սպառողի համար կարևոր են արտադրողականությունը, ճշտությունը, էներգոսպառումը, անխափանությունը: Հաստոցի ճշտությունը կիսով չափ արտահայտվում է, թերություն ունեցող արտադրանքի թողարկմամբ: Դրա համար էլ համալիր գնահատման համար հաստոցի արտադրողականությունն ու ճշտությունը կարելի է միա-

վորել պիտանի արտադրանքների արտադրողականության ավելի բարդ հատկության մեջ: Պիտանի արտադրանքների անխափանությունն ու արտադրողականությունը կարելի է միավորել նաև պիտանի արտադրանքների արտադրողականության մեջ՝ հաշվի առնելով անսարքության հետևանքով ստեղծված պարապուրդները: Իսկ վերջին արտադրողությունը կարելի է տանել էներգոսպառման միավորի համար: Այստեղից հետևում է, որ դիտարկվող հաստոցի որակի համալիր ցուցանիշի համար նպատակահարմար է ընդունել արտադրանքի համար պիտանի միավորների քանակը, որն արտադրվում է տրված ժամանակահատվածում (հաշվի առնելով անսարքության հետևանքով ստեղծված պարապուրդները) և վերաբերում է օգտագործված էներգիայի միավորին: Ինչ վերաբերում է վերջինիս, ապա պետք է կազմվի հաշվետվություն՝ հաստոցի որակի այլ ցուցանիշների համար և դրա որակի վերլուծություն:

Վերոնշյալ օրինակը լավ է ցույց տալիս համալիր ցուցանիշի կառուցվածքատրամաբանական կազմությունը: Մյուս օրինակը, բայց արդեն համալիր ցուցանիշի կառուցվածքաֆունկցիոնալ կազմության, համարվում է հաստոցի արտադրողականության և մշակման ռեժիմի (որը բխում է խառատային օպերացիայի տեխնոլոգիական բնույթից) տեխնոլոգիական պարամետրերի միջև կախվածության հաստատմանը: Խառատային հաստոցի արտադրողականությունը չափվում է միավոր ժամանակում մշակվող դետալների քանակով, իսկ այդ ժամանակը, այսինքն մեկ դետալի մշակման տևողությունը գծային կախվածության մեջ է (ուղիղ համեմատական է) մշակման գործընթացի երկարության և անցումների քանակության հետ և հակադարձ համեմատական է հաստոցի իլիկի պտույտների թվին ու մեկ պտույտի հասցրած մեծությանը:

Համալիր ցուցանիշի կառուցման մեկ այլ տարածված մոտեցում կայանում է հետևյալում: Արտադրանքի որակի համալիր ցուցանիշի ֆունկցիոնալ կախվածության հիմնավորումը եզակի ցուցանիշից այն դեպքերում, երբ այն հայտնի չէ, հեշտանում է այն պայմանով, որ միատեսակ արտադրանքների համեմատումը հիմնականում իրականանում է արտադրանքի համեմատվող տարբերակների որակի ցուցանիշների արժեքների ոչ մեծ տարբերությունների դեպքում:

Համալիր ցուցանիշը, որպես կանոն, զուգակցվում է եզակի ցուցանիշների կշռելիության գործակիցների որոշման անհրաժեշտության հետ, որոնց ճիշտ հաստատումը ունի կարևոր նշանակություն որակի համալիր ցուցանիշի արդյունքի համար՝ էականորեն ազդելով դրա ճշտության վրա [4-6]:

Արտադրանքի որակի համալիր ցուցանիշի կշռելիության գործակցի որոշման համար կիրառվում են անալիտիկ և փորձագիտական մեթոդներ համապատասխան ԳՕՍՍ 24294-80, ԳՕՍՍ 23554.0-79 և ԳՕՍՍ 23554.1-79-ի:

ԳՕՍՍ 24294-80-ում բերված են ռեգրեսիոն (հետընթաց) կախվածությունների և էկվիվալենտ (համարժեքային) հարաբերակցությունների մեթոդները: Այս ստանդարտի հիմքում ընկած է համապատասխանության հաստատման սկզբունքը եզակի ցուցանիշների և այն համալիր ցուցանիշների միջև, որոնք ունեն իրական իմաստային բովանդակություն և տվյալ արտադրանքի պահանջների բավարարման աստիճանն ավելի ամբողջական են արտացոլում: Դրա համար անհրաժեշտ նախնական տվյալները հանդիպում են կատալոգներում, գիտական գրականությունում, նորմատիվ-տեխնիկական գրականությունում (ՆՏԳ): Այն դեպքերում, երբ այդպիսի տվյալները բացակայում են, դրանք ստանում են փորձառական ճանապարհով [7]:

ԳՕՍՍ 23554.0-79 և ԳՕՍՍ 23554.1-79-ում հարցերի համալիրում և արտադրանքի որակի փորձագիտական գնահատման կազմակերպությունում բերված են ցուցումներ փորձագետների կողմից կշռելիության գործակցի հաստատման մասին [8, 9]:

Արտադրանքի որակի գնահատման պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ

միաժամանակ հարկ է լինում իմանալ արտադրանքի որակի համալիր ցուցանիշը, վերլուծել եզակի ցուցանիշները, պարզել դրանց բարելավման հնարավորությունները: Այդպիսի դեպքերում կիրառվում է արտադրանքի որակի գնահատման «խառը» մեթոդը, որի տակ, ըստ ԳՕՍՍ 15467-79-ի, հասկացվում է արտադրանքի որակի գնահատման մեթոդ՝ հիմնված արտադրանքի որակի եզակի և համալիր ցուցանիշների միաժամանակյա օգտագործման վրա: Այս մեթոդը միավորում է դիֆերենցիալ և համալիր մեթոդները, որոնց բնույթն ու մեթոդական առանձնահատկությունների մասին արդեն խոսվել է:

Արտադրանքի որակի գնահատման մեթոդների շարքում առանձնանում է «վիճակագրական» մեթոդը, որի տակ, ըստ ԳՕՍՍ 15467-79-ի, հասկացվում է արտադրանքի որակի գնահատման մեթոդ, որի ժամանակ արտադրանքի որակի գնահատման ցուցանիշները որոշվում են մաթեմատիկական վիճակագրության կանոնների օգտագործման միջոցով:

Արտադրանքի որակի ցուցանիշների գնահատման ժամանակ մաթեմատիկական վիճակագրության օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ շատ դեպքերում արտադրանքի արտադրման և շահագործման գործընթացում բազմաթիվ պատահական գործոնների ազդեցության արդյունքում արտադրանքի որակի ցուցանիշների արժեքները համարվում են պատահական մեծություններ: Դրա հետ կապված գործնականում արտադրանքի որակի գնահատման ժամանակ առաջանում է մի շարք բնորոշ վիճակագրական խնդիրներ.

- հաստատել արտադրանքի համեմատվող տարբերակների որակի ցուցանիշների տարբերության բնույթն ու պատճառը,
- որոշել արտադրանքի որակի ցուցանիշների միջև կոռռելիացիայի (հարաբերակցության, հնարավոր կապերի) գործակիցը,
- որոշել հետազոտվող արտադրանքի որակի ցուցանիշի կախվածության պարամետրերը թվային բնորոշումներից, որոնք ազդում են դրա գործոնների վրա,
- որոշել տարբեր գործոնների ազդեցությունը արտադրանքի որակի ցուցանիշների փոփոխության վրա,
- որոշել տեխնոլոգիական գործընթացի ճշտությունն ու կայունությունը և դրանց ազդեցությունն այդ գործընթացով ձևավորված արտադրանքի որակի ցուցանիշի բաշխման օրենքի վրա [6]:

Արտադրանքի որակի գնահատման այս կամ այն նմանատիպ խնդիրների լուծման համար կիրառվում են հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, որոնցից առավել բնորոշ են համարվում.

- որակի ցուցանիշների պարամետրերի բաշխման կետային և ինտերվալային գնահատում,
- հիփոթեզների ստուգում,
- դիսպերսիոն վերլուծություն,
- կոռռելիացիոն վերլուծություն,
- ռեգրեսիոն վերլուծություն,
- գործընթացների հերթականություն և այլն [5, 10]:

Արտադրանքի որակի գնահատումը հաճախ հանդիսանում է դատական փորձաքննությունների հետազոտման առարկա: Նման դեպքերում որակի գնահատման ողջ համալիրն ապահովվում է համալիր հետազոտությունների արդյունքում, որի շրջանակներում հաճախ անհրաժեշտություն է առաջանում տարբեր փորձագիտական ստորաբաժանումների մասնակցությամբ համալիր փորձաքննություններ կատարել՝ ընդհանրական պատկեր ստանալու նպատակով:

Այսպես, օրինակ՝ հաճախ են հանդիպում դեպքեր, երբ նախաձեռնող մարմնի կողմից հարցադրում է կատարվում. փորձագիտական եղանակով պարզել փաստացի տրամադրված նմուշների որակի համապատասխանությունը դրանց տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին: Նման որակական հետազոտությունների անցկացման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ պարզել ապրանքի տեսակը, որից ելնելով՝ հասկանալ հետազոտության քայլերի հերթականությունը, անհրաժեշտ այլ ստորաբաժանումների ներգրավվածության աստիճանը, համեմատելի ցուցանիշների պարզման նպատակով կատարվելիք հետազոտությունների շարքը և, իհարկե, հետազոտությունների արդյունքների ամփոփման ձևաչափը՝ վերջնական արդյունքների առավել մատչելի ձևակերպման և մատուցման անհրաժեշտությունից ելնելով:

Հարկ է նշել, որ նման հետազոտությունների վերջնական ստացվելիք արդյունքների վրա շատ մեծ ազդեցություն և նշանակություն ունի խմբաքանակից կատարված նմուշառումը, որը յուրաքանչյուր ապրանքի տեսակի համար կատարվում է համապատասխան նորմատիվային ակտով, հիմնականում ԳՕՍՏ-երով, սահմանված պահանջներով: Ճիշտ կատարված նմուշառումը հնարավորություն է տալիս ստանալ առավել ճշգրիտ և ստույգ վերջնական արդյունք: Նմուշառումից հետո հետազոտելի օբյեկտները տրամադրվում են փորձագիտական հետազոտման՝ փաթեթավորված և կնիքված վիճակում, որից հետո արդեն համապատասխան փորձագիտական հանձնաժողովի կողմից բացվում են այդ փաթեթները: Փաթեթների բացումից հետո նախ կատարվում է արտաքին զննում, որից հետո հետազոտելի օբյեկտներն ի պահ են հանձնվում հետազոտման այն փորձագիտական ստորաբաժանման աշխատակցին, ով կատարելու է գործիքային հետազոտություն, որն ըստ հերթականության առաջին քայլն է որակական ցուցանիշների պարզման գործընթացում: Այնուհետև, արդեն ըստ հերթականության հետազոտելի նմուշները փոխանցվում են համալիր բաժինների համապատասխան փորձագետներին և յուրաքանչյուր ստորաբաժանում պարզում է իր մասնագիտական շրջանակների տիրույթում գտնվող ցուցանիշները:

Համալիր ստորաբաժանումների հետազոտական աշխատանքները, ինչպես նաև ապրանքագիտական հետազոտությամբ պարզված տվյալներն ամփոփվում են ապրանքագիտական փորձաքննությամբ, որի վերջնական արդյունքների համաձայն տրվում են առկա որակական համապատասխանությունները, ինչպես նաև անհամապատասխանությունները՝ հաշվի առնելով և կիրառելով վերոգրյալ մեթոդները՝ կախված ապրանքի տեսակից և բնութագրիչ առանձնահատկություններից:

## Գրականության ցանկ

1. Քալանթարյան Պ.Ա. Արտադրության կազմակերպում // Տնտեսագետ // Երևան 2004:
2. Սարատիկյան Ս.Լ. Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտության հիմունքներ// Երևան 1999:
3. ՀՍ ԻՍՕ 9001-2009 // Որակի կառավարման համակարգեր: Պահանջներ//:
4. Սարատիկյան Ս.Լ. // Ապրանքագիտության տեսության համառոտ դասընթաց// Երևան 2006:
5. Адлер Ю., Полховская Т., Нестеренко П. // Управление качеством // Часть 1. Семь простых методов. Москва, РИА «Стандарты и качество», 2001.
6. ԳՕՍՏ 15467-79 // Управление качеством продукции. Основные понятия. Термины и определения.
7. ԳՕՍՏ 24294-80 // Определение коэффициентов весомости при комплексной оценке технического уровня и качества продукции.
8. ԳՕՍՏ 23554.0-79 // Система управления качеством продукции. Экспертные методы оценки

качества промышленной продукции. Основные положения.

9. ЧОУС 23554.1-7 // Система управления качеством продукции. Экспертные методы оценки качества промышленной продукции. Организация и проведение экспертной оценки качества продукции.
10. Минько Э. В., Кричевский М. Л. // «Качество и конкурентоспособность» // Питер 2004.

## ПОНЯТИЕ КАЧЕСТВА ПРОДУКТА (ПРОДУКЦИИ), КОНТРОЛЬ И ПРОВЕРКА НА СООТВЕТСТВИЕ В РАМКАХ СУДЕБНО-ТОВАРОВЕДЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ

**Арутюнян А.А., Габриелян О.В., Акобян А.Е**

*В статье раскрываются проблемы оценки качества товарной продукции, часто являющейся предметом судебной экспертизы. Статья посвящена детальному анализу процедур контроля и исследования качества товара. Рассматриваются ключевые этапы сравнительного анализа качественных характеристик товара, приобретенного в результате государственных закупок, с качественными показателями, изложенными в технических регламентах или технических условиях. Приведены виды контроля качества, методы и методики оценки товара. Обосновывается идея, что аналогичные товароведческие экспертизы позволяют, выявив факторы некачественной продукции, обеспечить более целевое и эффективное распределение государственных средств.*

**Ключевые слова:** качество, экспертиза, продукция, судебное товароведение, уровень качества, оценка качества.

## THE CONCEPT OF PRODUCT (PRODUCTION) QUALITY, CONTROL AND VERIFICATION OF COMPLIANCE WITHIN THE FRAMEWORK OF FORENSIC COMODITY EXPERTISE

**Harutyunyan A., Gabrielyan O., Hakobyan A.**

*The article discusses the problem of quality assessment of products which are often considered as a subject to forensic expertise. The article presents a detailed analysis of the procedure of control and investigation of of quality of products. The key stages of comparative analysis of qualitative characteristics of a product obtained in the result of a public purchase with qualitative indicators, listed in technical regulations are discussed. Types of control methods of assessment of a product are emphasized. It is important to note that analogous commodity expertise allows emerging factors of inaccurate production, as well as organizing purposeful and effective distribution of resources.*

**Key words:** quality, expertise, production, forensic commodity expertise, quality level, quality assesment.

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ղահրամանյան Զ.Գ., Պետրոսյան Ա.Ա., Մաչկալյան Ք.Հ.**

Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան

Հոդվածում ներկայացված են անտառային հրդեհների առաջացման հիմնական պատճառները և դրանց հետազոտման առանձնահատկությունները: Քննարկվել են հատկապես հրդեհների առաջացման առանձնահատկություններին, դրանց տարածմանը նպաստող գործոններին և ուղղություններին վերաբերող հարցեր: Ներկայացվել են նաև վերլուծություններ անտառային հրդեհների դեպքում իրականացվող հրդեհապեխնիկական և բուսաբանական համալիր փորձաքննություններում տարբեր մեթոդական մոտեցումների կիրառության վերաբերյալ, որոնք իրենցից կարևոր գործընթաց են ներկայացնում ՀՀ-ում անտառային հրդեհների առաջացման հիմնական պատճառների ու առանձնահատկությունների հետազոտության և որոշակիացման գործում:

Սույն հոդվածում ներկայացվել են նաև ՀՀ տարածքում ըստ մարզերի 2017-2020թթ.-ին տեղի ունեցած անտառային հրդեհների հետևանքով առավել շատ վնասված անտառածածկ տարածքների, դրանց քանակների, ծավալների և պատճառների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքներ, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հրդեհների ժամանակ ճիշտ հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպման և իրականացման առանձնահատկություններին:

**Բանալի բառեր.** անտառային հրդեհներ, հրդեհի օջախ, հրդեհի առաջացման պատճառներ, հրդեհային անվտանգություն, հրդեհի աղբյուր, հրդեհապեխնիկական և բուսաբանական համալիր փորձաքննություններ, այրման գոտի:

Ամբողջ աշխարհում անտառները և բուսածածկ տարածքներն ունեն շատ կարևոր Ամբողջ աշխարհում անտառները և բուսածածկ տարածքներն ունեն շատ կարևոր նշանակություն: Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում օդի հարաբերական խոնավությունը, մեղմացնում կլիման, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա:

Ըստ նպատակային նշանակության անտառները դասակարգվում են.

1. պաշտպանական (ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների, բարձր թեքության վրա գտնվող, կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային գոտիներում աճող, բուսաբանական այգիների, դեմդրոպարկերի շրջակայքի անտառները),

2. հատուկ (բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված, քաղաքային ու քաղաքամերձ, ռեկրեացիոն-առողջարարական, գիտական արժեք ներկայացնող, սանիտարական գոտիները պահպանող անտառներ),

3. արտադրական (բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառներ):

Վերջին տարիներին մարդկանց կողմից իրականացվող բնական ռեսուրսների ոչ ճիշտ և անհամաչափ օգտագործման հետ կապված անտառների դերն ու նշանակությունը առավել ընդգծ-

Թղթակցական հասցեն՝ Զուլիետա Ղահրամանյան Գագիկի, պայթուցատեխնիկական և հրդեհատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն; info@nbe.am



ված ու կարևոր է դառնում: Ներկայումս բնակչության թվաքանակի մեծացմանը զուգընթաց անտառները գտնվում են «ճնշման տակ», ինչը հաճախ հանգեցնում է վերջիններիս փասաման, դեգրադացիայի և ինչու չէ նաև՝ վերացման: Վերջին հարյուրամյակում մարդու տնտեսական գործունեության հետևանքով անտառների տարածքը կրճատվել է մոտ 2 անգամ: Անտառածածկ տարածքների ընդարձակման նպատակով կատարվում են արհեստական անտառատնկումներ:

ՀՀ-ում անտառային հրդեհները հատկապես շատ էին 2017թ.-ին: «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով 2017թ.-ին «Խոսրովի անտառ» պետական արգելոցում բռնկված հրդեհի արդյունքում այրվել է ընդհանուր առմամբ 1716,3 հա տարածք, որից արգելոցի սահմաններից դուրս այրված տարածքը կազմել է 74,66 հա: Վայոց ձորի մարզում բռնկված հրդեհի արդյունքում այրվել է ընդհանուր առմամբ 609.016 հա տարածք: Բյուրականում բռնկված հրդեհն ընդգրկել է մոտ 762 հա տարածք, որտեղ ցածր, չափավոր-ուժեղ և բարձր աստիճաններով այրվել է մոտ 597 հա տարածք: Ընդհանուր առմամբ 2017թ.-ին այրվել է 2922.316 հա տարածք: Հարկ է նշել, որ ՀՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալներով 2012-2016 թթ. բռնկված հրդեհների արդյունքում ընդհանուր առմամբ այրվել է 364.6 հա անտառածածկ տարածք [1]:

ՀՀ-ում անտառները կազմում են տարածքի 12,7%-ը: Առավել անտառածածկ են ՀՀ հարավարևելյան մարզերը, որտեղ բուսականության հիմնական տիպը հաճարենու անտառներն են՝ արևելյան հաճարենու գերակշռությամբ: Ենթալայան անտառային գոտում տարածված են հաճարենու խոնավ անտառները, որոնց ներսում և եզրերին լայնորեն տարածված են կաղնու մաքուր և խառը ծառուտները: Կաղնու մաքուր անտառները հիմնականում հարմարված են հարավային չոր լանջերի միջին և վերին գոտիներին, իսկ կաղնու խառնանտառները՝ արևմտյան և արևելյան լանջերին: Հյուսիսարևելյան մասի կաղնուտներում հիմնական անտառ կազմող ծառատեսակներն են վրացական և արևելյան կաղնիները: Կաղնու առավել տիպիկ անտառները տարածված են Լոռու մարզում: ՀՀ հյուսիսային մարզերում տեղ-տեղ հանդիպում են սոճու անտառների ոչ մեծ տեղամասեր: Ամենամեծը Գյուլագարակի սոճուտներն են և Շահալիի անտառատեղամասի սոճուտը: Հարավում անտառների համեմատաբար ընդարձակ տարածություններ հանդիպում են Սյունիքի մարզում (հիմնականում՝ վրացական կաղնի, հացենի, թխկի, բոխի, կովկասյան տանձենի, խնձորենի, հանդիպում են նաև ալոճենի, հունական ընկուզենի, հոնի, մրտավարդ, արջընկույզ և այլն): Հարավի մյուս մարզերում պահպանվել են արևելյան կաղնու անտառների առանձին, փոքր կղզյակներ (Ապարանում, Բյուրականից վեր, Սևանի Արեգունի լճեզերքին, Վեդի գետի ավազանում, Վայքում): Հայկական լեռնաշխարհի այլ մասերում հատկապես անտառածածկ են Հայկական Տավրոսի, Ներքին Տավրոսի հարավային (առավել խոնավ) և Արևելապոնտական լեռների հարավային ու հարավարևելյան լանջերը (հիմնականում՝ կաղնի, խնկենի, գիհի) [2]:

Անտառային հրդեհը բուսականության անվերահսկելի այրումն է, որը տարերայնորեն տարածվում է անտառային տարածքով:

Անտառային հրդեհները լինում են՝

- գետնատարած (կրակը տարածվում է հողի մակերևույթով՝ այրելով չոր խաշամը, խոտածածկույթները, երբեմն նաև ենթանտառը և մատղաշը),
- վերնատարած (այրվում է նաև ծառերի սաղարթը),
- ստորգետնյա կամ հողային (այրվում է հումուսային, տորֆային շերտը) [3]:

Անտառային հրդեհները կրակի զարգացման ընթացքում կարող են մի տեսակից անցում կատարել մյուսի և անգամ դառնալ կոմբինացված՝ 2 և որոշ դեպքերում նաև 3 տեսակների

միաժամանակյա առաջացմամբ:

Համաձայն գրականության մեջ առկա տվյալների գետնատարած հրդեհները կազմում են 98% և ընդգրկում են տարածքի 81.4%-ը, վերնատարած հրդեհները՝ 1.5% ընդգրկելով 18.6% տարածք, ստորգետնյա հրդեհները՝ 0.5%, ընդգրկելով 0.02%:

Գետնատարած հրդեհի դեպքում բոցի բարձրությունը հասնում է 50-150 սմ-ի, իսկ կրակը հարթ տարածքով տարածվում է 0,5-1,5 կմ/ժամ արագությամբ: Վերնատարած հրդեհներն ընդգրկում են անտառի վերնամասը և տարածվում 8-25 կմ/ժամ, իսկ երբեմն՝ 100 կմ/ժամ արագությամբ: Ստորգետնյա հրդեհներն առաջանում են տորֆահողերում, տարածվում են օրական 2-10 մետր արագությամբ, սակայն հրդեհաշիջման համար շատ վտանգավոր են և բարդ:

Անտառներում և բուսածածկ տարածքներում կրակի տարածման առանձնահատկությունները ուսումնասիրելիս դրանց կանխարգելման համար առավել կարևոր են վերջինիս տարածման արագությունը, կրակի բարձրությունը, ինտենսիվությունը և խորությունը: Կրակի տարածման տեսակից կախված վերնատարած և գետնատարած հրդեհները լինում են՝ կայուն և զարգացող: Ըստ արագության՝

- թույլ, մինչև 3 մ/րոպե,
- միջին, մինչև 100 մ/րոպե,
- ուժեղ 100 մ/րոպեից բարձր:

Անտառային հրդեհների տեսակի և դրանց ինտենսիվության որոշման հիմնական հատկանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում [3]:

**Աղյուսակ 1**

Հրդեհի տեսակը և ինտենսիվությունը	Եղանակային հրդեհավտանգության կարգ	Հրդեհի առանձնահատկությունները
Զարգացող գետնատարած Թույլ	I-II	Ծխի բարձրությունը մինչև 1մ, կրակի տարածման արագությունը մինչև 1մ/րոպե, կրակի բարձրությունը՝ մինչև 0.5մ, այրման ինտենսիվությունը՝ մինչև 100կՎտ/մ
Միջին	III	Ծխի բարձրությունը մինչև 1-2մ, կրակի տարածման արագությունը մինչև 1-3 մ/րոպե, կրակի բարձրությունը՝ մինչև 0.5-1.5 մ, այրման ինտենսիվությունը՝ մինչև 101-750կՎտ/մ
Բարձր	IV	Ծխի բարձրությունը 2մ<, կրակի տարածման արագությունը մինչև 3 մ/րոպե<, կրակի բարձրությունը՝ 1.5 մ<, այրման ինտենսիվությունը՝ 750կՎտ/մ<
Կայուն գետնատարած Թույլ	II	
Միջին	III	Այրվում է հողի միջնաշերտը մինչև միներալային շերտեր
Բարձր	IV-V	Այրվում է միներալային շերտը, դիտվում է ծառերի անկում
Վերնատարած Թույլ	III	Կրակը տարածվում է ներքևից վերև
Միջին	IV	Կրակը տարածվում է նաև հորիզոնական՝ հաճախ գերազանցելով գետնատարած հրդեհի արագությունը
Ուժեղ	IV-V	Այրվում է ամբողջությամբ կամ մնում են որոշ կիսաայրված մնացորդներ

Հրդեհների առաջացման պատճառներից կախված անտառային հրդեհները լինում են

բնական և անթրոպոգեն: Բնական պատճառներից ամենատարածվածը կայծակներն են, որոնք կազմում են ընդհանուր հրդեհների մոտ 7-8%-ը: Մեծ մաս է կազմում հրդեհների առաջացումը մարդկային գործոնի ազդեցությունից (չհանգցված խարույկ, ծխախոտի ծխուկ, բաց կրակ և այլն): Եղանակային պայմանների հետ կապված հաճախ են հանդիպում նաև ինքնաայրման պրոցեսներ [4]:

Անտառներում հրդեհավտանգ սեզոնային պայմանները, որոնց ընթացքում հնարավոր են անտառային հրդեհների բռնկում, սկսվում են ձյան շերտանստվածքի վերացման պահից և վերջանում աշնանային անձրևային եղանակի կամ ձյան առատ շերտի առաջացմամբ: Առավել հրդեհավտանգ համարվում է աշնանային եղանակը: Նման եղանակին բնորոշ է օդի քիչ խոնավությունը, արևային օրերի գերակշռումը, չորացած խոտածածկույթը, որոնց դեպքում տերևները այրվում են անգամ կրակի փոքր աղբյուրի առկայության պայմաններում: Այս ընթացքում գրանցվում են անտառային հրդեհների մեծամասնությունը (հրդեհային մաքսիմում): Գարնանը և ամռան սկզբի ընթացքում օդի խոնավությունը զգալի աճում է: Բացի այդ, մեծ քանակությամբ խոտածածկույթը, բույսերի և ծառերի տերևները խոչընդոտում են կրակի տարածմանը: Նման եղանակային պայմաններում դիտվում են առավել քիչ թվով հրդեհներ (հրդեհային մինիմում): Վեգետացիոն շրջանի ավարտին եղանակային պայմանները նորից պատճառ են դառնում հրդեհների առաջացման: Հրդեհային մաքսիմումի և մինիմումի հաջորդականությունը կախված է բույսերի աճի առանձնահատկություններից և կլիմայական պայմաններից: Գործնականում անհրաժեշտ է հաշվի առնել, որ տարվա ընթացքում կլիմայական պայմաններն ունենում են շեղումներ միջին եղանակային պայմաններից, և առավել հաճախ՝ նման շեղումները լինում են բավականին տեսանելի: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ առավել հաճախ անտառային հրդեհները առաջանում են չոր շոգ եղանակին: Օդի բարձր ջերմաստիճանի դեպքում մեծանում է գոլորշացման պրոցեսը, որի հետևանքով այրունակ զանգվածի խոնավությունը պակասում է, ինչը հետևաբար մեծացնում է հրդեհի առաջացումը: Երկար չորային եղանակի ժամանակ անգամ հնարավոր է հրդեհի առաջացում ճահիճներում:

Չնայած նրան, որ վերջին ժամանակաշրջանում ի հայտ են գալիս անտառային հրդեհների առաջացման նոր պատճառներ, ինչպես, օրինակ՝ գլոբալ տաքացումը, ջերմոցային էֆեկտը, այդուհանդերձ հիմնական պատճառը հանդիսանում է մարդկային գործոնը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել և առավել ուսումնասիրել հրդեհների առաջացման հիմնական պատճառները, դրանց տարածման ուղղությունները և առանձնահատկությունները: Նման խնդիրների ուսումնասիրման մեջ կարևոր դեր ունեն հրդեհատեխնիկական և բուսաբանական համալիր փորձաքննությունները:

Անտառային հրդեհների փորձաքննությունը հրդեհատեխնիկական փորձաքննությունների տեսակներից մեկն է, որի արդյունքում որոշվում են հրդեհի առաջացման պատճառը, դրա առաջացմանը և տարածմանը նպաստող գործոնները, հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը և այլ հարցեր: Հիմնականում փորձաքննությունները անցկացվում են համալիր բուսաբանական և ապրանքագիտական փորձաքննությունների հետ [5]:

Անտառային հրդեհների փորձաքննության օբյեկտ են հանդիսանում՝

- անտառային տարածքի և դրան հարակից հողերը,
- բնության հատուկ պահպանվող տարածքները,
- բուսածածկ տարածքները և ծառերը,
- գյուղատնտեսական ցանքատարածքները,
- մարդիկ և կենդանիները, որոնք տուժել են հրդեհի ընթացքում՝ ինչպես ջերմային ներ-

գործողությունից, այնպես էլ՝ այրման արգասիքների թունավոր կամ մեկուսացնող գործողությունից:  
Անտառային հրդեհների հրդեհատեխնիկական փորձաքննության հետազոտման խնդիրներն են հանդիսանում՝

- հրդեհի օջախի (այրման առաջացման առաջնային վայրի) պարզումը,
- հրդեհի առաջացման պատճառի պարզումը,
- հրդեհի տարածման ուղիների պարզաբանումը՝ հաշվի առնելով այրման պրոցեսների և այրման արգասիքների առանձնահատկությունները, եղանակային պայմանները և այլ գործոնների ներգործությունը հրդեհի տարածման վրա,
- անտառային հրդեհի դասի որոշումը,
- մարդկանց գործողություններում հրդեհի առաջացման կազմակերպական տեխնիկական պատճառի հետ կապված հրդեհային անվտանգության ապահովման պահանջներից շեղումների առկայության կամ բացակայության պարզումը,
- պատճառած վնասի որոշումը,
- հրդեհի առաջացման հետ պատճառական կապի մեջ գտնվող անձանց գործողությունները կամ անգործությունը, հրդեհի արագ կամ սրընթաց տարածմանը նպաստող պայմանների ստեղծումը, հրդեհաշիջման աշխատանքների և վտանգավոր գոտուց մարդկանց տարահանման դժվարացումը կամ անհնարինությունը և այլն:

Հրդեհատեխնիկական փորձաքննության իրականացման ժամանակ կարևոր է այրման պրոցեսների առաջացման և տարածման մեխանիզմի մասին ունենալ ճշգրիտ և հստակ պատկերացումներ:

Բաց տարածքներում բռնկված հրդեհների առանձնահատկություններն են հանդիսանում ջերմա- և գազափոխանակման պայմանները: Նշված հրդեհների ժամանակ տեղի չի ունենում ջերմության «կուտակում» այրման գոտու գազային տարածություններում, այսինքն՝ ջերմափոխանակումն իրականացվում է անսահմանափակ կերպով շրջակա միջավայրի հետ: Այրման գոտին որոշվում է գլխավորապես տարածության մեջ այրվող նյութերի բաշխմամբ և այն ձևավորող կոնվեկտիվ գազային հոսքերով, իսկ ջերմային ազդեցության գոտին որոշվում է առավելապես ճառագայթային ջերմային հոսքով, քանի որ կոնվեկտիվ ջերմային հոսքերը բարձրանում են վերև՝ անսահմանափակ տարածություն և գրեթե չեն ազդում ջերմային ազդեցության գոտու վրա գետնի մակերևույթին:

Կայծակի հետևանքով տեղի ունեցած հրդեհների դեպքում, որպես կանոն, կայծակը հարվածում է վերևից և կրակը տարածվում է վերևից ներքև ուղղությամբ: Հաշվի առնելով, որ չայրված նյութերը գտնվում են կրակից ցածր հարթության վրա, կրակի տարածումը դեպի ներքև ոչ էֆեկտիվ է և հանգեցնում է բոցի ուժգնության թուլացման, ինչի հետևանքով հրդեհը գնալով մարում է: Մարդկային գործոնով պայմանավորված հրդեհների դեպքում որպես կանոն հրդեհը սկսվում են գետնի հարթությունից, ինչի հետ կապված դրանք աչքի են ընկնում տարածման մեծ արագությամբ և զարգացման վտանգավորությամբ:

Հրդեհատեխնիկական փորձաքննության ժամանակ խիստ կարևոր է դեպքի վայրի հետազոտությունը:

Դեպքի վայրի զննության ժամանակ զննման ենթակա տեղամասը կարելի է պայմանականորեն բաժանել 2 գոտու.

1. տարածք, որը հարակից է հրդեհի օբյեկտին,
2. տարածք, որի սահմաններում ընթացել է հրդեհի զարգացումը:

Փորձը ցույց է տալիս, որ նպատակահարմար է հետազոտությունը սկսել առաջին գոտուց:

Մի դեպքում՝ հետազոտությունը նպատակահարմար է սկսել այն տեղից, որն ավելի քիչ է այրված, հետո անցնել առավել շատ այրված հատվածին և հրդեհի հավանական օջախին: Դա թույլ է տալիս ավելի կենտրոնացված և արդյունավետ ուսումնասիրել դեպքի վայրը, պարզել հրդեհի մի գոտուց դեպի մյուսն անցման սահմանները, որոշել դրանց ձևերն ու տեսակները: Մյուս դեպքում՝ նպատակահարմար է հետազոտումը սկսել հրդեհի հնարավոր (ենթադրյալ) օջախից, ջերմափոխանցման հաշվին այրման տարածման հնարավոր ուղիների պարզումից: Միայն ուղղակի և անուղղակի հատկանիշների համադրությամբ կարելի է ճշգրիտ որոշել հրդեհի օջախի տեղակայումը: Հետազոտման մեթոդն ու հերթականությունը կախված են կոնկրետ պայմաններից, հանգամանքներից և հրդեհի բնույթից:

Հետազոտության արդյունքների հիման վրա փորձագետը պարզում է առանձին երևույթների միջև եղած պատճառական կապը, կազմում է նախնական կարծիք այս կամ այն օբյեկտի և երևույթների նշանակության մասին (հրդեհի պատճառը պարզելու համար), վեր է հանում հրդեհի առաջացման որոշակի պատճառին բնորոշ հատկանիշները, իսկ դրանց որոշ մասը մերժում (որպես պատճառահետևանքային կապ չունեցող): Հետազոտության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև նեգատիվ հանգամանքների վրա, որոնք հակասում են հրդեհի ժամանակ այրման պրոցեսի (գործընթացի) էությանը կամ այլ գործոններին ու հանգամանքներին: Օրինակ, հրդեհներից մեկի փորձաքննության ժամանակ, ականատեսները պնդում էին, որ հրդեհն առաջացել է կայծակի ուղիղ հարվածից: Տվյալ դեպքում բուսածածկ տարածքներում կայծակի ուղիղ հարվածին բնորոշ հատկանիշներից ծառի մասնատվածությունը կամ դրանից կեղևի անջատումը, նաև ծառի այրումը վերևից ներքև ուղղությամբ առկա չէր, հետևաբար հրդեհը չէր կարող առաջանալ կայծակի ուղիղ հարվածից:

Հարկ է նշել, որ անհրաժեշտ է նաև մեծ ուշադրություն դարձնել բուսածածկ տարածքներում այրված խոտածածկի և ծառերի ածխացման խորություններին և ուղղություններին՝ հաշվի առնելով դեպքի վայրում համընթաց քանու ուղղությունը, տարածքի ռելիեֆային դիրքը և եղանակային պայմանները:

Անտառային հրդեհների գնահատման գոյություն ունեցող մեթոդաբանությունը թույլ է տալիս որոշել տարածաշրջանում հնարավոր հրդեհների տարածքի մակերեսը և պարագիծը: Ելքային տվյալ է համարվում անտառային հրդեհների նշանակության ցուցանիշը և հրդեհի զարգացման ժամանակը [6]: Անտառային հրդեհների ժամանակ իրականացվում է նաև հրդեհված ծառերի և խոտածածկ տարածքի բուսաբանական հետազոտություն: Հետազոտության ընթացքում որոշվում են հրդեհի արդյունքում վնասված ծառերի քանակները, տեսակները, հրդեհից հետո այդ ծառերի կենսական վիճակները [7]: Ծառերի կենսական վիճակի որոշման համար տարբեր հատվածներից կեղևն անջատվում է բնափայտից, ուսումնասիրվում կեղևի վիճակը, կեղևի և բնափայտի միջև գտնվող հատվածները, տարբեր կողմերից պատահականության սկզբունքով ընտրվում և հատվում են ճյուղեր [8]: Ծառերի տեսակային պատկանելիությունը որոշելու համար հետազոտվում են դրանց բնորոշ ձևաբանական (մորֆոլոգիական) հատկանիշները, առանձնացվում, որից հետո համադրվում մեթոդական գրականության տվյալների հետ [9]:

Այնուհետև որոշվում են դրանց տարիքները, որի համար ըստ մեթոդաբանության պահանջների ծառերից աճի գայլիկոնի միջոցով վերցվում են նմուշներ՝ կեղևից մինչև միջուկ ներառումով: Բոլոր նմուշները տեղափոխվում են լաբորորատորիա՝ հետագա փորձագիտական հետազոտության համար: Աճի գայլիկոնով վերցված նմուշները պայմանականորեն համարակալվում են, որից հետո փակցվում են հատուկ կրիչների վրա և ենթարկվում մեխանիկական մշակման: Մշակված մակերեսները պատվում են կավճի փոշով տարեկան օղակների

սահմանները ավելի տեսանելի դարձնելու համար: Պատրաստի նմուշները հետազոտվում են «Lintab 6» տեսակի սարքի միջոցով. արդյունքում որոշվում է դրանց բնափայտում առկա նմուշների տարեկան օղակների քանակը, ինչն էլ համապատասխանում է դրանց տարիքին [10]:

Սովորաբար հետազոտությամբ անհրաժեշտ է լինում, պարզել, թե արդյոք այդ ծառերը հրդեհի հետևաքով ջերմային ազդեցության արդյունքում արդյոք կվերականգնվեն, թե՛ ոչ: Այս պարագայում հետազոտվում են այդ ծառերի կենսական կարևոր օրգանները. եթե ջերմային բարձր ազդեցության են ենթարկվել և ամբողջովին չորացել են ծառերի համար կենսական կարևոր նշանակության օրգանները (սաղարթի հիմնական մաս կազմող հասուն ճյուղեր), սաղարթային հատվածները (շիվեր, տերևներ), ինչպես նաև հասուն ճյուղերի կեղևային հատվածներում առկա են անգն աչքով տեսանելի ճաքեր, մուգ գորշացումներ և այլն, ապա այդ ծառերը ենթակա չեն վերականգնման:

Սակայն, եթե հետազոտված ծառերը հրդեհի հետևաքով ենթարկվել են մասնակի ջերմահարման, որի արդյունքում վնասվել են 2-ից 3 հասուն ճյուղեր, շիվեր և տերևներ, իսկ այդ ծառերի այլ հատվածներ չեն ենթարկվել բաց կրակի ուժեղ ազդեցության և գտնվում են կենսունակ վիճակում, ապա վերջիններս համալիր ազդեցությունների կիրառմամբ ենթակա են վերականգնման:

Հարկ է նշել, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում վերջին երեք տարիների ընթացքում նշանակվել են անտառային տարածքների հրդեհատեսնիկական և բուսաբանական շուրջ 80 փորձաքննություններ: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ անտառային տարածքների հրդեհատեսնիկական և բուսաբանական համալիր փորձաքննությունը իրենից ներկայացնում է բավականին բարդ, բայց միևնույն ժամանակ կարևոր գործընթաց, որի շրջանակներում հնարավորինս ապահովվում է նշանակվող փորձաքննություններին առաջադրվող հարցերի լիարժեք պարզումը՝ ապահովելով բազմակողմանի և լրիվ հետազոտությունների օբյեկտիվ արդյունքներ:

## Գրականության ցանկ

